

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳՐԱԿԱՆ.	Ինքնաբոյս ծաղիկներ	Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՅ
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ.	Այցեխան պտոյտի Հայտն Աղբակու	Յ. Վ. ՍՕԼԱԽԵԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ.	Համառօտ պատմութիւն Ռուսիոյ աշխարհակալութեան ի կեդրոնական Ասիա	***
ՆՈՐԱՎԷՊ.	Ռուս կեանքէ տուամ մը (Գատական քննչի մ'օրագրութեան) թարգմ.	Պ. Տ.
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ.	Ի Պիւլպիւլէ առ վարդն. — Ի Լուսնեկէ առ վարդն (Բանաստեղծութիւնք Յակոբ վարժապետի) Հաւաքեց Հ. ԷԿԻՆԵԱՆ	
ՊԱՏՄԱԿԱՆ.	Կրօնք նախկին Եգիպտացւոց վասն ապագանի կենաց	Գ. Զ.
ՔԱՂԱՔԱՆ ՇԱԲ. ԼՐՈՅ	Արտաքին, Ներքին, Ազգային	
ՍԻՄՈՆԷ ԵՒ ՄԱՐԻ.	(Կղապիւն տը Մոնթէթէն) թարգմ.	Մ. ՉՕՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ	տարեկան	Կէս ոսկի Օսման.
»	վեցամեայ	Քառ » »
Գաւառներ	տարեկան	Կէս » »
Օտար քաղաքներ	»	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք »	»	15 դահ. արծաթ
Մէկ թերթին Գինն է	»	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո' եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ.

Խմբագրութիւն Արեւելք Եւ Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Ներսիսեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

—

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 րդ ՏԱՐԻ

1885 ԱՊՐԵԼ 27

ԹԻԻ 3767

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 27 ԱՊՐԵԼ

ԳՐԱԿԱՆ

ԻՆՔՆԱՐԱՅՈՒՄ ԵՄԱՂԻԿՆԵՐ

Կենդանի արձան
Մանուկ Աղա Թերլեմեզեանի յիշատակին
Բ.

Նախորդ յօդուածովս խոնարհացած էի իմ ընթերցողների ներկայացնել Վանայ ինքնա-բոյն Զաքէիէն Պ. Միքայէլ Թերլեմեզեանը: Այսօր կը փութանք կատարել մեր խոստումը:

Երեւակայեցէք մի քսան եւ հինգամեայ բարձրահասակ նիհար երիտասարդ, պարզ եւ խղիւզ ճակատով, փայլուն, ազնիւ աչքերով եւ անկեղծ, համակրելի ու ընթոյշ դէմքով, եւ դուք կ'ստանաք մի մերձաւոր գաղափար Պ. Միքայէլի արտաքին տեսքի վերայ: Ի բնէ խիստ բանաստեղծական եւ նըրբազնին աշխարհատեսութեամբ, նա շատ չափաւոր կրթութիւն ստանալուց յետոյ, 18 տարեկան հասակին, ըստ սուրբ անու-դութեան հայ վաճառականների, տեղա-փոխուում է ձեր նախածանօթ Էրզնէ: Սակայն արտաքուստ կատարունակք կրթութիւնը նրա համար գոցուած լինելով, յաջող հանգամանքների չնորհով Պ. Միքայէլի հոգին չէ դադարում զարգանալ ներքուստ: Այն օրից նա սեղմում է իր ձեռքի մէջ մի գրիչ, յաւիտեան նրանից անբաժան մնալու համար: Եւ նա գրում է... Հարցուցէք ո՞րտեղ. — խանութում, տանը, եկեղեցում, դպրոցում, ձորում, Զմի-Զմի Մաղանայի գլխին, վարդի թփերի տակ, սոխակի

բոյնի մօտ, գըշգըշուն առուների եզերքը... Բաւական է որ Պ. Միքայէլի ծոցը դատարկ չլինի. եւ այնտեղ միշտ կայ մի կտոր թուղթ ու սրածայր մատիտ:

Նա գրում է շատ արագ, զի տողերի ու տերն ու յանգերը կարծես վաղուց ի վեր ձեւած, կտրած եւ նրա գլխի մէջ բաւական է որ նա ոգեւորի, կեդրոնանայ մի նիւթի վրայ: Տեսնելով նրա յոյժ բեղմնաւոր գրիչը, եւ միշտ մտաբերում եմ Սպանիացոյ Կալէրօնը. Կալէրօնը որ սկսում ու վերջացնում էր մի օրուայ մէջ իր հաղթա-րաւոր չափաբերական տողերից կազմուած ողբերգութիւնները. Կալէրօնը, որին շատ Մադրիդցիք (միջին դարերում) լոկ miracle-հրաշք- մականունով էին ճանաչում:

Ահա մեր վանցի Կալէրօնը, որ Նախ-դասներ փոքր ինչ խաղող ուտելուց յետոյ, մօտենում է Յանկոյաների վապին իր մածուցիկ ձեռքերը լուանալու համար: Ձեռքերի լուանալը, սրբելն ու այս ոտանաւորի գրելը կարծես մի բոլետի գործ է լինում:

Վ Տ Ա Կ

Դու տեսե՞ր ես	Որք վար ու վեր
Յստակ վտակ,	Խնդան ժպտին
Զինջ, անապակ:	Հետ վտակին:
Դու տեսե՞ր ես	Դու տեսեր ե՞ս
Ամբիծ ալիք,	Փռնջ եւ վտակ,
Որ տայր ձօնիկ	Վարդ եւ սոխակ՝
Շաղաւտ փնջին,	Զերմ սիրահար՝
Կանաչ խոտին:	Գտնեն զիրար:
Դու տեսե՞ր ես	— Ես տեսեր եմ
Այն թերթիկներ,	Յստակ վտակ,

Որոյ մէջ լող Ում ծոց վճիտ
Առնոյր ծաղիկ , Պատկերի մ' ժպիտ,
Գիշերն շողող , Որոյ տէր
Փայլուն աստղիկ . Երգող մ' էր :

Լուսնկայ գիշեր է : Սրտի ամբոխմունքը
կտոր մի ցրւելու համար Պ. Միքայէլը մի
թեթեւ պտոյտ է կատարում իրենց այգիի
մէջ : Իր պաշտած վարդը վայրկեան անգամ
չհեռացնելով քթի պնչներէն՝ բարձրանում է
դէպի Գեղ, եւ տեսէք արդիւնքը .

Շ Ա Տ

Կը ժպտէր Բայց մարտի Կը սիրեմ
Վեր երկին , Ծաղիկներ Այն ծիւ վարդ ,
Փայլաստղեր , Գեղանի Յոր դռներ
Կէս լուսին : Բան զայն էր : Գեղ բոյր ՇԱՏ :

Վասպուրականի երանաւէտ տեսարան-
ների դիմաց անպակաս է միշտ մի բան հան-
դիսատեսի միտքը մոլորեցնելու , նրա խո-
ղաղ սիրտը պղտորելու համար : Այդ՝ մեր
պապերի հոյակապ շինութեանց փլատակ-
ներ , նրանց ճարտարապետութեան տխուր
բեկորներն են : Այդ սրտաճմիրկ վայրերից
մէկն է Ձորաւանց կամ Ձորովանց գիւղը .
մի կիսակործան գիւղ , որ ժամանակով Հա-
յոց Կաթողիկոսների խորխոս նստատեղին էր
լինում : Ահա՛ « բարձրահասակ երիտասար-
դը » դարձեալ մի պտոյտ է կատարում ,
բայց մի պտոյտ , ուր « գեղ , բոյր շատ ու-
նեցող վարդի » տեղ՝ մոխիր ու քարեր է հո-
տոտում : Եւ կոխածոյ քարերից մէկը իրեն
աթոռ շինելով , իր մտքերն այսպէս է ուր-
դաղ ծում .

ԶՈՐՈՎԱՆԻՅ ԱՒԵՐԱԿ

Ձորովանից ճոխ տաճարն
Խոնարհեր էր վաղ ուրեմն ,
Նշխարք միայն անդ ցրուեալ
Կերեւէին տխրադէմ :

Յերկիր եղած բարձր գմբէթն ,
Որոյ հսկայ մեծ ստուերն
Մինչ ի Սևդայ Հայոց գիւղ
Առաջտունն կ'երկարէր :

Ո՛հ , հոգեբուղիս Աւաղան ,
Կարօտ խաչի՛ բեմ , խորան ,
Աստղի , ցօղի , անձրեւի ,
Ներքեւ հեծէ լուռ , անձայն :

Ձէ այլ եւս հսկայ տաճարն
Ուր կ'աղօթէր հայ մշակն ,
Ուր Հայոց մեծ Հայրապետն
Բաղմէր երբեմն փառունակ :

Քանդեց , աւա՛ղ , դու թշնամին ,
Ե՛ւ տաճարն ե՛ւ վեհարան .
Փոխանակ շարականաց
Թռչնիկն երգէր « վայ » միայն :

.
.

Երեկոյ է : Պ. Միքայէլը խանութից նոր
է վերադարձել : Մի բոլորակաձեւ սեղանի
վրայ պատրաստուած է Թէրլէմէգեանց տան
օրհնեալ , նահապետական ընթրիքը : Մէկը
միւսի յետեւից , սկսեալ ընտանիքի մեծ նա-
հապետ իննսունամեայ « Հաջի Աղայից » մին-
չեւ փոքրիկ , լալկան ճժերը շարուում են խո-
րին երկիւղածութեամբ այդ պատկառելի
սեղանի շուրջ : Հաջի Աղայի քահանայապէս
սեղանը օրհնելուց յետոյ սկսում է « խա-
թունների » անոյճ ձեռքով պատրաստուած
կերակուրների խորթալի լալիումը , « ջոջ
աղաների » լուրջ եւ ուրախ զրոյցները , ճը-
ժերի կականն ու աղմուկը , պատանիների
ուրախ զուարթ երգասացութիւնը : Սակայն
նրանց մէջ չէ տան գլխաւոր զարդը , բա-
ցակայ է Պ. Միքայէլը : Հաց դնել բերանը
այն միջոցին , երբ իր սիրտը՝ լի սուրբ ըզ-
գացումներով՝ փլծկում , եռում , ալէկոծ-
ւում էր , նա օրբապղծութիւն համարեց :
Պէտք էր վերջապէս պարսաւել իր հայրենա-
կիցների այն մի կարգ մարդկին , որոնց
համար իրենց « եսից » ու գրոյանից զատ
չը կայ աշխարհումս ո՛չ սպտիւն , ո՛չ ընտա-
նիք , ո՛չ բարոյականութիւն , ո՛չ մարդ-
կութիւն . . . Պէտք էր , ասում եմ , ըզ-
գուշացնել դեռ եւս անաղարտ մնացած
Վանցիները իրենց այդ ապականիչ ցեցերի ,
լիբը շողջորթների , անամթ Կեղծաւորների
մեքենայութիւններից :

Եւ ահա՛ դուրս ժայթքեց անմեղ բա-

նաստեղծի կրակացած, տարուբերուող հրա-
բուխից սրանչեղի

ԿԵՂԾԱԽՈՐԸ

Կեղծաւոր մարդ արդեօք երբեք իւր երեսին չէ՞
հայել
Կամ իւր աչքին հետաքրքիր և սրտոս միտ տուել
Իւր պատկերից ինչպէ՞ս թէ ցարդ նա չէ սրտով զըզ-
ւացել
Այսօր էլ այդ կերպարանքով բաղմութեան մէջ է
յայտնուել
— Կեղծաւորի աչքը կեղծ, հայեացքը կեղծ, դէմքն
է տխրեղծ:

Ժպիտն ասես՝ վերաւորիչ, սայրասուր է, թու-
նաւոր,
Լեզուն բոլոր թիւր երկդիմի, միշտ բանասարկու նեն-
գաւոր.
Աւա՛ղ մարդոյն, որ հաւատայ նորան իւր սիրտ,
գործ մի նոր.
Խաղաղութեան երես տեսնել՝ չունի աչքով մարմ-
նաւոր:
— Ժպիտը կեղծ, լեզուն կեղծ, հաւատքը կեղծ,
գործն է տխրեղծ:

Աղօթքն տեսնես, մաղթանք լես՝ արհեստական
ու խարդախ,
Լաց, արտասուքն՝ խաբկանք բոլոր, շահու համար,
անվստահ:
Յուշիկ դնայ, մեղմիկ խօսէ, ցած, ակնկոր ու խո-
նարհ,
Տերն սոցանից ասաց «դգո՛ւշ», գայլ են դռբա, ծած-
կեալ մահ:
— Աղօթքը կեղծ, արտասուքը կեղծ, գնացքը կեղծ,
խօսքն է տխրեղծ:

Իւր ընկերաց մահ պատրաստեց եւ ձեւացաւ
սուրբ, արդար,
Այդ միջոցով քանի՞ տներ դա անպատուեց վատա-
բար.
Անյաղթ դէնքն է՝ պինդ չամաչել եւ բանասրկել ան-
գագար,
Հայր եւ որդի, ջերմ բարեկամ, միշտ խռովել քոյր,
եղբայր:
— Կեղծաւորից հեռո՛ւ, հեռո՛ւ... լինի թէ՛ սոսկ,
թէ՛ Տէր—Հայր:

1884 տարուայ փետրվար ամսի կիրակի
օրերից մէկն է: Վան քաղաքի հայ ժողո-
վուրդը մի հազուադէպ եռանդի ու իրա-
րանցումի մէջ է: Ամէն մարդու բերանից
«թաղական» բառն է լսուում. ամէն եկեղե-
ցի «ահմալադրապէս» իր պահապան հրեշտակ,
եօթնադիւխեան նոր «խորհրդարան» է կազ-
մակերդուում: Առաջուց կարելի էր գուշակել,

թէ որո՞նց համար էր վերապահուած նոր
ընտրելիութեան փառքը: «Պինդ չամաչե-
լու գէնք» կրողներից շատերը վաղուց ար-
դէն գունդ գուռ մուրալով՝ առատ քուէներ
էին վաստակել: Այդ գիտէր նաեւ մեր
Կալլերոնը, բայց եւ այնպէս անձամբ եկե-
ղեցիներից մինը այցելելուց յետոյ ողբում է.

ԹԱՂԱԿԱՆԱՅ ԸՆՏՐՈՂՈՒԹԻՒՆ

Սա ազգային օրէնքն ինչի՞նչ այսպէս վատթար
Անարգեցիկ, կեղտոտեցիկ յիմարաբար.
Խարդախութեան արին մի նոր դասարան,
Ամօթ, պատկառ՝ էլ ո՞վ դիտէ ո՞ւր փախան:

Քանի տեսնեմ այս կերպ գործեր՝
Կ'ասեմ յաւէտ.
Ընտրող տգէտ, ընտրեալ անգէտ,
քուէն անպէտ:

Վա՛շ, բացարձակ քուէ առին գոռողք մի քան,
Թէպէտ դրել, ուղիղ խօսել չդիտեն անգամ.
Խեղճ ժողովուրդ իւր ձայն տուաւ ո՛ւմ...
ասէք ո՛ւմ...:

Եւ իւր կենաց դեռ ըսպատէ մի բարեքուս:
Քանի տեսնեմ այսպէս մարդ իկ մեզ
պաշտօնեայ,
Միշտ իրաւամբ կ'ասեմ՝ Հայուն
նոր կեանք չը կայ:

Փիլիսոփայութիւնը բանաստեղծութեան
անբաժան ընկերն է: Վանի ժողովուրդը
շատ ուրիշ հայ քաղաքների հետ դառնում
է այսօր իր դարդացման այն խառնաշփոթ-
չըջանում, որ յայտնի է ազգերի պատմու-
թեան մէջ անդրաշահան անունով: Այդ վտան-
գաւոր, բարեկրնեան, բայց մի եւ նոյն ժա-
մանակ միաթիարական պէրիփառ (դարաշրջա-
նը) սեպհականութիւն է այն ազգերի, որ
երէկուայ թմրութիւնից մտած են այսօր
կէս-լուսաւորութեան եւ կէս-քաղաքակըր-
թութեան աշխարհը: Այդ ժամանակամիջո-
ցը թերուանների, իմաստասիրների, ցուցամու-
ների, կապիկների, աղուէսների ու բարո-
յական ամենատեսակ հրէշների քաղաքոր-
ծութեանց դարն է: Այդ այն ահարկու դա-
րաշրջանն է, ուր, ինչպէս ասում էր ինձ
այս օրերս մի ուսմիկ վանցի, մարդիկ չեն

արժանի « ոչ դրամատի եւ ոչ դժոխքի , այլ պիտի կախուին մէջ երկնքի , մէջ գետնի » : Ժողովուրդը զգուժեալ , սարսափում է այն ամէնից որ « ուսումնական » եւ « ուսումնականի » հոտ է բուրբուռ : Նա կորցնում է իր հաւատը դէպի « կրթութիւն » եւ « առաջդիմութիւն » ճշմարտող , աղմկալի բառերը : Նա յետ է առնում իր վստահութիւնն այն անձանց վրայից , զորս իրեն իբր իր ապագայ բարօրութեան եւ փրկութեան կարապետներ ներկայացուցին : Եւ երանի՛ այն ժողովրդին որ երջանկութիւն ունի իր կրթական առաջին առաքեալների մէջ « յղածք » , հետեւ ու խնայող անձինք նշմարելու . . .

Անցողիկեան այդ բնորոշ շրջանից քիչ մը խիթարութիւն տեսաւ նաեւ Վանը , եւ ասի՛ թէ ինչ սրտաճիւղ տեսարան է ներկայացնում մեր երիտասարդ բանաստեղծի վճռաւոր սիրտը .

ԶԻ՛ ԼԻՆԻԼ

Զի՛ լինիլ , անուսում անձ կատարեալ մարդ չի՛ լինիլ ,
Մի քանի բան ուսանելով ուսումնական չի՛ լինիլ ,
Լայն զգեստով , թանգ շորերով դիւանագէտ չի՛ լինիլ ,
Ո՛չ մօրուքով , ո՛չ անոցով գիտուն ասուիլ չի՛ լինիլ ,
Անաղին ծնողաց որդին հոգով մարմնով աղին չի՛ լինիլ ,
Առանց ցեղի , առանց չափան ազնուական չի՛ լինիլ ,
Հայրեր , զաւակ չը դաստիարակուած վայելուչ մարդ չի՛ լինիլ ,
Հիւանդ մարդոյ որդին առողջ , երկայնապեայ չի՛ լինիլ ,

Ոչ անպարկէշտ պատանին ութսունամեայ չի՛ լինիլ ,
Անբարեխառն երես կարմիր , աչեր փայլուն չի լինիլ ,
Եւ հիմնապէս չուսած աղջիկ , ո՛չ , ըստիւր մայր չի՛ լինիլ ,
Արեւ չը տեսած ծառ , բոյս , ծաղկին ինչպէս հոտ ,
Գոյն չի՛ լինիլ ,
Դայեակի կաթ հարազատ մօր կաթի նման քաղցր չի՛ լինիլ ,
Տղի համար մօր գրկաց պէս հանգիստ մի տեղ չի՛ լինիլ ,

Արմատացած ծուռ համոզում նորից փոխել չի՛ լինիլ ,
Ինչպէս կ'ասեն հաստացած ձիւղ ուղղել , թեքել չի՛ լինիլ ,
Երկու ծաղկով , մէկ կանաչով երբեք գարուն չի՛ լինիլ ,

Անդաստանին անձրեւ պէտք է , ցօղով ջրուել չի՛ լինիլ ,
Առանց յանդին սերմ ցանելու , պտուղ յուսալ չի՛ լինիլ ,

Վարձկան մարդը տան տիրոջ պէս անձնանուէր չի՛ լինիլ ,

Օտար աչքով լըյս , գործ տեսնել հաւատացէ՛ք չի՛ լինիլ ,

Ինչպէս այլոց խնամոց թողուած գործ կատարեալ չի՛ լինիլ ,

Տըւեղ ագուաւ կարմիր վարդին ջերմ սիրերգակ չի՛ լինիլ ,

Տըխուր բուռից ախորժեղի երգ ըսպասել չի՛ լինիլ ,
Կտաղած ծովուն աղաչելուց գութ եւ օգուտ չի՛ լինիլ ,

Եւ անպատիւ ընկերներից բարեք յուսալ չի՛ լինիլ ,
Առանց փոքր ինչ զոհողութեան , ո՛չ , ազգասէր չի՛ լինիլ ,

.

Երկիւղ կրելով Մասի կարդացողներին ձանձրոյթ պատճառելուց , վերջացնում եմ Վանի ինքնաբոյս Ժառնգիչին նուիրած յօդուածս :

Պ. Թէրլէմէզեանի բանաստեղծական հումորութեան վրայ մի լիակատար գաղափար տալու համար պէտք է դեռ եւս շատ եւ շատ հատուածներ առաջ բերել : Առաջին փորձի նպատարութիւնը տեսնելուց յետոյ դժուար չի լինիլ ինձ գեղարուեստասէր ընթերցողներին նորանոր բաւականութիւններ տալ :

Յաւում եմ միայն որ հայ կալըերոնի ու տանաւորների մեծ մասը բազմաթիւ տուններից բաղկացած լինելով , անհնարին է բանաստեղծութեան բոլոր ճիւղերին վերաբերեալ նիւթերից մի անուագ գէթ մի մի օրինակ առաջ բերել :

Ինչպէս այս , այնպէս եւ յետոյ տպուելիք օրինակներից հետաքրքիր ընթերցողները պիտի համոզուին , որ Պ. Թէրլէմէզեանի տաղանդը հաւասարապէս փայլում է բանաստեղծութեան բոլոր ճիւղերի մէջ : Եւ այդ բնական է , քանի որ նա դեռ եւս նոր գրող լինելով , հաստատապէս չեն մշակուել իր անհատական գոյնն ու ձիրքերը :

Առ այժմ ինձ թւում է թէ նա աւելի լաւ է պատմական անցքերի եւ բնութեան նկարագրութեան մէջ , թէեւ միւս կողմից տեսնուած է որ այն ամէնի մէջ , ինչ որ նրա սրտի թելերը ամուր կերպով շարժել կարող է՝ Պ. Թէրլէմէզեանը սքանչելի է :

Գալով երիտասարդ բանաստեղծի արտադրութիւնների պակասութեանց՝ ես բացի նրանց երկարութիւնից , հանդիպում եմ յաճախ մտքերի ճապաղ եւ թոյլ արտայայտութեանց : Եւ այդ անհասկանալի չէ , զի

նախ՝ Պ. Թէրլէմէզեանը նոր դրող է, երկրորդ՝ նա օժտեալ է կալիւրոնական ծայրայեղութեամբ եւ երրորդ՝ նա առ այժմ մտադիր չէր իր գրուածները տպագրութեան արժանացնելու:

Յուսանք որ առաջին անգամ կեանքին մէջ իր երկանց պտուղները Մատնուր հրատարակուած տեսնելով, պիտի չյայտադէ մեր յարգելի Ինքնաբերական իր քանքարաւոր գրչին մի նոր զարկ էլ հասցնելու:

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՅ

ՎԵՐՁ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԱՅՅԵԼԱԿԱՆ ՊՏՈՅՏ Ի ՀԱՅՍՆ ԱՂԲԱԿՈՒ

Այն ինչ վանայ Գաւառական վարչութեան որոշմամբ ինձ վիճակեցաւ Առաջնորդ անուանել Աղբակու եւ վանահայր՝ Ս. Բարդուղիմեայ վանուց, առաջին անգամ ի Պաշ-Գալէ հանդիպեցայ, որ հանուր չէքէարիի կուսակալութեան կեդրոնավայրն է: Պաշ-Գալէ ունի 100 տուն հայ բնակիչ, մի եկեղեցի՝ փայտաշէն եւ մի դպրոց՝ զուրկ ի պատշաճեալ բարեկարգութենէ: Տեղական Հայքն միշտ կուսակցական վէճերով պառակտեալ են. գաղութած երեւելիներէն քիչերը պարզ հայերէն ընթերցումն եւ գըրել գիտեն. մնացեալը տգիտութեան խաւարի մէջ կը դանդաղեն: Սոքա ընդհանրապէս երկրագործ են. վաճառականք եւ արհեստաւորք սակաւաթիւ են, յորս կը գտնուին ոգելից ըմպելեաց սիրահարներ: Երկու քահանայ ունին, որք թէեւ չեն այնչափ ուսեալ, այլ սիրող են ուսմանց:

Թերեւս 100 էն աւելի խանութներ կան, յորս կը նստին վանցի, կարնեցի, պարսկաստանցի Հայք, Իսլամք եւ Հրեայք. ի շարս սոցա հազիւ բնիկներէն քանի խանութպանք կը գտնուին, որք նոր արթնցած են իրենց խոր քունէն:

Կան Պաշ-Գալէի մէջ իսլամ բնակիչք 100 տունէն վեր, յորոց մի մասը կառավարութեան դուռը բարձր եւ խոնարհ պաշ-

ածներ կը վարեն, իսկ մնացեալք երկրագործ են. սոցա մէջ եւս ուսեալները դըժուարագիւտ են: Ունին մելիթ, խմամք եւ դպրոց մը:

Հոս կը գտնուին նաեւ 150 տունէն աւելի Հրէայ, որք ունին փոխ-քահանայապետ եւ քահանայք, սինակոկայ եւ դպրոց մը. սոքա իրենց լեզուաւ միայն գիտեն գըրել կարդալ. ընդհանրապէս աւելի առեւտրականութեան հետեւող են քան թէ երկրագործութեան:

Կուսակալութեան դրան բոլոր բարձր պաշտօնեայք ուրիշ աշխարհէ կրթուած եւ դաստիարակուած մարդիկ են, որք Բարձր. կուսակալի եւ միւթէսարրըֆ փաշաներու արթուն հսկողութեամբ Օսմանեան պետութեան օրինաց համաձայն կը վարեն իրենց ստանձնած պաշտօնն յօգուտ հասարակութեան:

Սոյն կեդրոնավայրի մէջ 21 օր Առաջնորդարանը մնալէս զկնի, որովհետեւ դեռ մեր պաշտօնը վաւերացնող Պէրաթը Կ. Պոլսէն մեղ հասած չէր, Ս. Բարդուղիմէի Առաքելոց վանքը գնացի: Սոյն վանքը մեծ անուամբ կը պանծայ իւր հնութեան եւ մանաւանդ իւր հոյակապ եւ չքնադակերտ Տաճարին եւ դաւթին շինուածոց համար: Ունի Տաճարին մէջ յիշեալ Ս. Առաքելոյ շիրիմը, որոյ աւելի ջերմ ըլճիւ եւ հաւատով նուիրատու են Սալմաստու Հայք՝ քան զիւր վիճակայինսն, թէ եւ այս մերձիկը եւս չեն զլանար բնաւ իրենց պատկանեալ տուրքերը շարունակել:

Վանքն ունի ընդարձակ սահման, արտօրայք, մարդագետինք, եւ ոչխարի սընընդեան յարմար շղթայաշար լեռներու ընտիր արօտավայրք եւ մակաղատեղիք: Վանուց չորս կողմէն մի մի ժամէն աւելի սահմանազուլաները կ'աւարտին. երկու գետոց հոսանք յարեւելից եւ հիւսիսէն ընդ իրեար խառնուելով՝ ճիշդ վանքին առջեւէն խոչնաճայն կը սահին յարեւմուտս մի կամարակապ կամուրջի ներքեւէն՝ բնակչաց եւ անցորդաց զուարճախառն բերկրանք ձօնելով:

Վանքին կից կայ գիւղ մը, որուն վանքի Գեղ անուն կը տրուի, 20 տուն հայ եւ 30 է աւելի քուրդ գրացիներով: Հայերը վանք կը կանխեն աղօթել. իսկ Քուրդե-

ընն ունին մղկիթ և խմամբ: Սոյն խառն ժողովորդացմէ իւրաքանչիւրն վանուց այդ ընդարձակ հողը (որ տակաւին Խաֆայի օրինաց ներքեւ չէ մտած) որչափ կրնայ եւ կ'ախորժի անխորաքար կը մշակէ առանց վանքին մի մասնաւոր շահ հասցնելու. միայն Հայք ըստ ժողովրդական դասուց օրինաց՝ վանքի տուրքերը և տան գլուխ պէտք եղած ժամուն քաղեր սարակները տալով՝ ուրիշ օգնութիւններ ալ կը մատուցանեն յօժարասիրտ:

Այս հողային մեծ խնդրոյն ցարդ անկերպարան մնալը, անպիտի Սոսնորդներու անդործունէութեան եւ անհեռատեսութեան արդիւնք լինելը կը դուշակուի:

Վանքս՝ թուրքո-ուսմա պատերազմի ժամանակ հանուր երկրացւոց հետ ունեցաւ մեծ կորուստ. քանզի այն ինչ մերձակայ գիւղացւոցմէ վանքը իբրեւ տեղի անվտանգ եւ վայր ապահով ճանչցուած էր, ամենքը իրենց կահ ու կարասիք եւ թանկահին ապրանքները բերած էին ի պահեստի: Գիւղացւոց ի պահեստի դրած ապրանքաց հետ վանքին տաճարի նուիրական ոսկեղէն եւ արծաթեայ անօթները, կերպասեայ զարդերը, անթիւ պղնձեղէնք, բոլոր շարժական կալուածները, ամբարեալ արստիք եւ անասնեղէնք ամբողջ կողոպտուեցան, բնակիչք գաղթեցան: Սոյն սոսկալի եղեռնագործութեանց կարապետն էր հռչակաւոր բռնակալ Ալի-Խանն, որ այժմ ի շնորհս Օսմանեան տէրութեան, կայ ի Դաւրէժ յարգեւանս:

Վանուց հասարակ շինուածոց մէջ կը գտնուի մի վայելուչ շէնք եւս, զոր սովորաբար Սովետ կեդրոնական Յանձնաժողովոյ անդամներէն Քերովբէ Էֆէնտի կիւլպէնկեան 230 օսմ. լիւր. շինել տուած էր Դարաց անունով. սակայն մենք ըստ բուռն փափագանաց յիշեալ բարերարին եւ մեր՝ փոխանակ զայն դպրոց տեսնալու, գտանք հիւրանոց, ուր երթեալէ ուխտաւորք կը բնակէին եւ որոյ սենեակներէն մին ալ ինձ բաժին ինկաւ: Այլ որպէս զի ոչ ես ընդ պարտիւք գտնուիմ իմ կողմանս մէջ վանքը անդպրոց թող տալովս, եւ ոչ ալ նոյն շէնքը շինողի իղձը անպատկ մնայ, անսխալ կերպիւր ձեռնարկ եղայ նոյն յարկի մի պատշաճաւոր սենեակը առ այժմ դպրոց բանալ

Քերովբէան անուանակոչմամբ, ուր՝ 10ի չափ գիւղերօթիկ աշակերտ հաւաքելով՝ ուսուցիչ կարգեցի ինձ հետ գրագրութեան սխալտունով գտնուող Շմառնեան Սնդրէաս պարոնն, որ իւր ուսումը մեծաւ մասամբ Վանայ Միացեալ ընկերութեանց Վարժապետանոցէն ընկալած է:

*
* * *

Մեր սխալտոնադիրը չէր հասներ, այլ հասաւ մեր վրայ յիսնօրեայ պահք մը. եւ որպէս զի քիչ մը թեթեւ սահին մեր վրայէն նորա ծանրութեան ժամերը, ընտրեցի ընդհանրական այց մը տալ Աղբակու մէն մի գիւղերու Հայոց: Ուստի փետրուար 20ին Պոնիկերտ գիւղն իմայ, ուր 20 տուն հայ եւ 20 տուն քուրդ գտայ. Հայերը մի ծերունի քահանայ ունէին, դպրոց ոչ, երկու հոյակապ փոքր տաճարներ՝ գիւղին շինուածոց եղբրը հաստատեալ՝ զէմ առ գէմ միմեանց, սակայն մերկ բնաւին եկեղեցական վայելչութենէ յերեսաց նախայիշեալ կողոպտման:

Հետեւեալ օրը ասկէ հեռի ժամ ու կէս Պապլասաւ գիւղը հասայ, ուր կային 6 տուն Հայք, մի փոքրիկ սրբատալ տաճար, որով իրենց հոգեւորական փոփանքը՝ կը կատարուէր երբեմնակի մերձակայ քահանայից պատահմամբ. սորա եւս ունէին 20 տուն քուրդ դրացի, մղկիթ եւ խմամբ:

Ճիշդ դէպի հարաւ գնալով՝ մի ժամ հեռաւորութեամբ Փարս գիւղը մտանք, ուր բազմադիւ քիւրդ գրացիներու հետ խառն գտայ 7 տուն հայ, քահանայ ոչ. եկեղեցի ունին փոքրիկ՝ խիստ անձեւ եւ ախոռատիւլ. Քիւրդերն ունին մղկիթ եւ խմամբ: Այս երկու գիւղերու նուազաթիւ Հայք բաւական կը նեղուին օտարներու կողմանէ:

Փարսէն մեկնելով, ժամ կիսոյ միջոցաւ ձանքորդած՝ Սորատէրի Հայերը ողջունեցի: Ստ գտայ 23 տուն աղգային, չունէին քահանայ եւ դպրոց, այլ ունէին գիւղէն մի արտավար հեռաւորութեամբ բարձր դրից վրայ անհամեմատութեամբ հոյակապ տաճար մը՝ Եփթաֆն անուամբ, որոյ ձեւը արտաքուստ եւ ի ներքոյ քառաթեւանի վայելուչ երեւութով՝ որ հիացում կ'ընծայէ տեսնողին. լայնութիւնն ունէր 41 ոտնաչափ, եւ երկարութիւնն 43. արտաքուստ խա-

չաճեւի կամարներու կեդրոնէն ի վեր կը բարձրանար կաթուղիէն թերեւս 10 կանդնաչափ աւելի բարձր հիւանալի արուեստագործութեամբ պերճացեալ, եւ անկէ ետեւ ուրիշ գմբէթներու նման չէր սրածայրեալ՝ այլ տափարակութենէ նուազ տարբերութեամբ մի փոքրիկ գմբէթով կ'աւարտուէր, որ թէ՛ ի մօտոյ եւ թէ՛ ի բացուստ կրկնադմբէթ կը ձեւանայ յաջտեւոյց։ Սոյն հրաշակերտ յարկը ոչ միայն երբեք չէ լկուած չարժանաց բռնութիւններէն, այլ եւ գիտես թէ ճարտարագործը նոր դադաթնաքարը հաստատած՝ իւր գործիքները ժողվելով վար կ'ընէր . միայն ցաւ զգացի յիս, երբ չափազանց որոնելէս զկնի, չկրցի նորա հիմնարկութեան թուականը գտնալ։

Նուիրական շէնքիս վայելչութենէն դեռ չյագեցած, հեռացանք անտի մէկ ժամու ճանքով Զոգաւկ քիւրդաբնակ գիւղին մէջ գտնուած մի մեծ գերդաստան կազմող վարդան անուն Հայու մ'այցելութիւն տալ՝ որ բաւական փայլուն կ'ապրէր բազմաթիւ քիւրդ դրացեաց մէջ։

Սոյն գիւղէն շուրջելով յարեւմուտս կոյս՝ յերկանի գիւղը մնացինք, որ ունի 35 տուն հայ, մի գեղեցիկ կուսագործ մեծ տաճար, փայտայարկ ժամատնով մը . չունին դպրոց, այլ ծերունի քահանայ մը . ունին եւ երեսունէն աւելի քիւրդ բնակակից երկրագործներ։ Գիւղէն կէս ժամու հեռաւորութեամբ լեռնամէջ կայ յանուն Ս. Աստուածածնի հոյակապ տաճար մը՝ անբնակ, որոյ սահմանի ամբողջ հողերը գիւղիս քիւրդ բնակչաց սեփականութիւն դարձած են այժմ։

Յերկանիէն երեսնիս արեւմտակողմ դարձունելով՝ լեռնային ճանքով մը ժամ ու կէս միջոցաւ Կարապիւլի ձորամէջ գիւղը գիւղերեցինք, ուր գտայ 7 տուն հայ եւ 15 էն աւելի քիւրդ երկրագործ տներով։ Սոքա ունէին մզկիթ եւ ծերունի խմամ։ Հայք չունէին ո՛չ տէրտէր եւ ո՛չ ժամ։

Ասկէց մի ժամ ճանքայ չափելով՝ Զուխ գիւղացւոցմէ հիւրնկալեցայ, ուր կային 13 տուն Հայք, մի եկեղեցի փոքր, ո՛չ քահանայ եւ ո՛չ դպրոց, 20 տունէն աւելի բարի քիւրդ դրացիներով։ Զուխը բարձր լեռան մը թեւին վրայ շինուած լինելուն առթիւ, լեռին ալ Զուխայ Կեփէ (կիրճ) կամ լեռ կ'ըս-

ուի։ Սոյն լեռը իւր չափազանց բարձրութեան համար, ձմեռը ո՛չ միայն թանձր ձիւնով կը վերարկուի, այլ եւ ամպ, մէգ եւ անընդհատ մրրիկ իւր վրայէն անխառտ են, վասն այն՝ եւ մահասարսուռ ահիւ հազիւ նորա դադաթէն կրնան զերծանիլ ճանապարհորդքն, եւ ընդ մերթ եւս ոմանք անդ կը մնան կենազրաւ։ Սակայն յոյս մեծ կայ թէ տեղական կուսակալութիւնը արդէն Բ. Գրան տուած հրամանին վրայ, պիտի ձեռնարկէ յարդեւ յիշեալ վայրերի առաւարքն։

Լեռնային գիւղիս շատ մ'եկեւէջներն անցնելով՝ երկու ժամէն զինի հապիւ կըրցանք Յէրեսանայ Հայոց բարեւ տալ, յորում գտայ 35 տուն Հայ, մի փայտայարկ եկեղեցի եւ քահանայ մը, դպրոց ոչ։ Այս Հայոց շարքն մէջն է Պապա անուն մի մեծ գերդաստանի տէր հարուստ եւ իշխան մարդըն, որ 18 տարիէն ի վեր կուսակալութեան Խաթէի ժողովոյ մէջ անդամակցութեան պատիւ կը վայելէ եւ ազգասիրաբար կը գործէ ըստ կարի . սոցա քիւրդ բնակակիցք քիչ են։

Մալգաւայ գիւղը հասանք մէկ ժամէն զինի, ուր էին 20 տուն Հայք, մի փայտաշէն եկեղեցի փոքր, քահանայ մը, անդպրոց։ Կային եւ բաւականին քուրդ բնակիչք։ Գիւղիս Հայոց կարգէն էր մի անուանի Հայ Մարտիրոս Աղայ, որ կառավարութեան կողմանէ միւտիրութեան պաշտօնի պատիւը կը վայելէր։

Փոխուելով աստի՝ ի Խառատուն մտանք մէկ ժամ չլրացած, ուր կը գտնուէր 20 տուն Հայ երկրագործ, մի տաճար հոյաշէն, քահանայ եւ դպրոց ոչ։ Քուրդ դրացեաց թիւը նուազ էր։

Հաստատանայ Հայոց տուի վերջին բարեւս, կէս ժամ ճանքորդելէս վերջը, որք էին 35 տուն Հայ, ունէին մի տաճար վայելչաշէն, քահանայ մը, դպրոց ոչ։

*
* *

Աստ աւարտեցաւ մեր այցելական շրջանը . այնուհետեւ մնացի միայն Ալեկերտ, Սօրաւ, Ալալեան, Փիս, Ռասուլան, Լալկօտ եւ Գլադուր գիւղերը, յորս հապիւ կը գտնուէին չորսական հնգական տուն Հայեր՝

անեկեղեցի եւ անքահանայ, որոց մէջ միայն Փիւ գիւղն ունէր մի սրբաւոր մատուռ, եւ Ալալեան գիւղէն ոչ շատ հեռու ունէր վանք մը Ս. Յակոբ անուն: Քանի գիւղեր ալ թէն տաճարներ ունէին՝ այլ իսպառ հայազուրկ, որովք կը գուշակուէր թէ՛ ընդհանուր Աղբակը Հայաստան եղած է ժամանակին. քանզի չկար գիւղ մը, յոր չգտնուին գերեզմանատուներ եւ ընտիր մահարձանք պըսակեալք հնութեան թուականներով: Բաց յայցանէ կը մնայ ինձ այցելել ի Կէփե եւ ի Ճեւաֆէի գաւառսն գտնուած Հայոց, յորս կան 100 է աւելի Հայ տուներ, գեղեցիկ տաճարներ, երկու քահանայ:

Աւելորդ չեմ համարիր նաեւ հետեւեալ փոքր ծանօթութիւնն տալով՝ ապա վերջացնել գրուածս:

Աղբակու մարդկանց շարքին մէջ կրնան գտնուիլ մինչեւ 150 տարի քաջառողջ ամենայն զգայարանօք ապրողներ: Երկրին գիրքը ընդհանրապէս լեռնոտ լինելով՝ օդը խիստ սարդ ու սղաղ է. տօթային ամիսներն անգամ ընդ միշտ զովագին են. վասն այն՝ եւ պաղատու ծառերն եւ այգիքը չեն զօրանար, սակաւ անդեր անպըտուղ ծառեր կը տեսնուին, թէ եւ ամեն գիւղէն յորդ ջուրերը մշտապէս են:

Երկրիս բերքերն են մաքուր ցորեան, գարի եւ կտաւահատ ևն. ընդեղէնը՝ խիստ նուազ, վասն զի նոր սկսուած է պարտիզական պտղոց եւ ընտանի բանջարեղինաց կարեւորութիւն տրուիլ: Այս պէտքերու պակասութիւնն աւելի վանէն եւ Սալմաստէն կը լեցուի:

ՅՈՎԱԾՖ ՎԱՐԴ. ՍՈՒԱԽԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ

Ռուսական երկիրն՝ Ասիոյ մէջ, ի բաց առեալ գլխաւորիս, կը բռնէ տարածութիւն մը՝ որ հաւասար է Պելճիոյ, Հոլանտայի, Գերմանիոյ եւ Աւստրո-Հունգարիոյ տարա-

ծութեանց, ի միասին առնելով: Սոյն ահա՝ գին թագաւորութեան սկզբնաւորութենէն մինչեւ այժմ հազիւ թէ երեսուն տարի անցած է: Նիկողայոս կայսրը ցանկալով ապահովել ռուսական վաճառականութիւնն Ասիոյ մէջ, առեւտրական դաշն կապեց Չինաստանի արեւելեան նահանգաց հետ՝ հարաւարեւելեան Սիպերիայի, Քեախտայի եւ Մոնղոլեան անապատներու վրայէն առեւտուր ընելու: Սակայն Ռուսիոյ առեւտրական կարաւանները միշտ կը կողոպտուէին: Այս ժամանակին Կասպից եւ Արալեան ծովերու մէջ գտնուած Քիրկիզները խիլայի էմիրի հովանաւորութեան ներքեւ էին, իսկ Արալեան ծովու եւ Սիր-Տարիոյ հիւսիսակողմն գտնուած թափառական Քիրկիզներու կառավարիչը Խոջանտի էմիրն էր: Այս վերջինս փակած էր արեւմտեան Չինաստան տանող լեռնային անցքերն, այնպէս որ կարաւաններու առջեւ փակ կը մնային ճանապարհները եթէ պահանջուած գրամը չվճարէին Քիրկիզներուն: 1834ին Արալեան ծովու հիւսիսակողմն եղող Քիրկիզները կը նուաճուին, եւ ռուսական նոր գաղութականութիւնն պաշտպանելու համար Արալ գետի բերանէն մինչեւ Արալեան ծովն եւ աւելի արեւելք Ալթայեան լեռնաշղթայն, բերդեր եւ այլ ամրութիւններ շինուեցան: Բայց լեռանց անցքերը տակաւին փակ կը մնային: Այս միջոցին Արալեան ծովու շուրջն կիսաշրջանաձեւ չորս անկախ թագաւորութիւններ կային, այն է 1. Խիվա, որ Ամու-Տարիայի ձախ կողմի ամբողջ երկիրները կը բռնէր եւ կը թագաւորէր Արալ եւ Կասպից ծովերու միջեւ թափառող ցեղերու վրայ. 2. Խոջանտ, որ հիւսիսէն սահման ունի՝ Արալեան ծովը եւ կը ձգուի Ամու-Տարիայի աջ եզերքի վրայ ի Բամիրա. 3. Սամարղանտ, Սիր-Տարիայի ձախ եզերքն. 4. Պուխարա, որոյ սահմանները անորոշ էին:

Ռուսաց յատակադիծը նախ Սիր-Տարիայի աջ եզերքն կը տարածուէր, յետոյ պիտի առնուէին լեռնային անցքերը: Արդէն քանի մը ամենակարեւոր ձեռնարկութիւնք եղած էին երբ յանկարծ Խրիմի պատերազմն ամեն գործոց արգելք դարձաւ, մանաւանդ Ասիոյ գործերուն: Ռուսք տակաւին ամբողջ տասն տարի պաշտպանողական դիմք մէջ էին եւ անդադար յարձակում կը կրէին

Թափառական ցեղերէն՝ որոց կ'օգնէին Էմիրները : Ի վերջոյ նշանաւոր յատակագիծը իրականացաւ 1864ին : Օրէնսդրութիւն և հարաւային Սիպերիայէն եկած զօրքերը գրաւեցին Թուրքիստանի Թաշքէնտ եւ Խաքանտ խանութեանց մեծ մասը : Այսպէսով հիմնուեցաւ Թիւրքիստանի գլխաւոր նահանգապետութիւնն որոյ կառավարութիւնը նախ Քաուքիման զօրապետին և յետոյ Ձերնայէվին յանձնուեցաւ : Կարգը Պուխարայի Էմիրին եկաւ . նա ինքզինք Ռուսիոյ աւատական տէրութիւն յայտարարել պարտաւորուեցաւ : 1868ին Սամարղանտն առնուեցաւ եւ բոլոր երկիրն Ռուսիոյ անցաւ . 1870ին Խաքանտի Էմիրի երկիրն մնացեալ մասերը եւ միւս բոլոր երկիրները Ռուսիոյ անցան :

Խիվայի խանը տակաւին անկախ էր : 1873ին Քաուքիմանի առաջնորդութեամբ զօրաց երեք բազուկներ, մէկը Կասպից ծովէն, միւսն Սիպերիայէն եւ երրորդն Թուրքիստանէն, հակառակ արշաւանաց դժուարութեան մէկ անգամէն Խիվա մըտան : Ամու-Տարիայի աջ եղբորը Ռուսիոյ մնաց . նաւագնացութիւնը բացառապէս ռուս հպատակներուն յանձնուած էր :

Խոքանտի խանի երկիրն 1873ին, 1874ին եւ 1875ին քանի մ'անգամներ ապստամբութիւն ընելուն համար Քաուքիման ստիպուեցաւ ամբողջ երկիրը զրաւել : Միացման բարձրագոյն հրամանը 1876ին մարտ ամսոյն մէջ հրատարակուեցաւ : Ռուսիոյ լաւագոյն աշխարհակալութիւններէն մէկն էր այս : Նա գրաւեց 240 քիլոմետր երկայնութիւն եւ 120 քիլոմետր լայնութիւն ունեցող իւր հողի պտղաւետութեամբ ընտիր եւ կլիմայով Թրանսայի հարաւակողմն յիշեցնող գեղեցիկ երկիր մը : Բաց աստի Խոքանտի եւ Քաշկարի միջև գտնուած լեռները հարուստ են երկաթի, պղնձի առատ հանքերով եւ մինչեւ անգամ թանկագին քարերով :

Կեդրոնական Ասիոյ խանութիւնները ջնջելէն յետոյ, Ռուսիա որոշեց վերջապէս Թափառական Թուրքմէններու արշաւանաց եւ ասպատակութեանց վերջ տալ : Դոքա աւազակաց խումբեր կը կազմէին, երկայն ժամանակ պատերազմներ կը մղէին Պարսից դէմ եւ շատ պարսկական զօրաց մեծամեծ հարուածներ կուտային : Իւրաքանչիւր յաղ-

թութենէն յետոյ աւելի համարձակ եւ զօրեղագոյն կը լինէին : 1871էն մինչեւ 1879 Ռուսներն ի զուր աշխատեցան նուաճել այս ասպատակները : Թէեւ Թուրքմէնները մէն մի անգամ կը յաղթուէին, բայց որովհետեւ ռուսական զօրքերն իւրաքանչիւր պատերազմէ յետոյ ետ կը դառնային, ռուսի պատերազմաւէր Թափառականները տկարութեան նշան կը համարէին զայս եւ տակաւ առ տակաւ այնքան յանգուգն կը լինէին որ 1879ին Կէօք-Թէփէի ռուսական արշաւանքն յետո մղեցին : Հետեւեալ տարին Թուրքմէնաց դէմ կանոնաւոր զօրքեր եկան ամենայն կարեւոր պատրաստութեամբ մէկտեղ : Աքոպելէֆ զօրապետը լեռնային նեղ ճանապարհ մը շինեց Միխայլովէն մինչեւ Գըղըլ-Արվադ : Ամեն պաշար պատրաստ էր Գըղըլ-Արվադի մէջ : Արշաւանքին յաջող վերջ մ'ունենալն յուսարի էր, ըստ որում Կէօք-Թէփէն առնուեցաւ : Աքոպելէֆ իւր փայլուն տաղանդի շնորհիւ կարողացաւ այս քաջ եւ կիսավայրենի ցեղերը Ռուսիոյ կողմն անցունել : Անգլո-ռուսական պատերազմի համար Թուրքմէններն ընտիր առաջապահներ կարող են լինիլ : Կէօք-Թէփէի անկումէն անմիջապէս յետոյ ռուսական զօրքերը Մերվն ալ գրաւեցին :

Եթէ Թուրքիստանի աշխարհակալութիւնը զօրացուց Կեդրոնական Ասիոյ մէջ Ռուսիոյ քաղաքականութեան ազդեցութիւնն, սակայն եւ ծանրագոյն բեռ մ'եղաւ Ռուսիոյ համար : Թուրքիստանի տարեկան հասոյթը մասնաւորապէս 1,627,000 ռուբլի է, մինչդեռ ծախքն ընդ հակառակը 3,000,000 ռուբլի :

Այսպիսի ելմտական կացութենէ մ'ազատելու համար զԹուրքիստան, պէտք է որ անոր մօտ գտնուի հարուստ, պտղաւետ եւ երկրագործութեան յարմար գաւառ մը : Այսպիսի յարմար գաւառ Հերաթն է միայն իւր հարուստ հողով և կլիմայով : Կեդրոնական Ասիոյ մէջ վաճառականութիւնն իսկոյն կը կենդանանայ երբ ռուսական ապրանքները մուտ գտնեն այն տեղ : Ռուսիա գշերաթ գրաւելու պէտք չըզգար, բայց զայն իւր ազդեցութեան ներքեւ դնելն անհրաժեշտ է, եթէ ոչ Ռուսիոյ միջին Ասիոյ երկիրները միայն Ռուսիոյ ելմտական զօրութիւնն սպառելու պիտի ծառայեն : Ահա թէ ինչու Ռուսիա ոչ մի կերպով չի համաձայնիր այն սահմանադժի համար զոր պատրաստած է Լորտ Տըֆրին, Սըր Բեդեր Լըմստըն եւ մնացեալ ամենքը :

ՆՈՐԱՎԵՊ

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ ՏՌԱՄ ՄԸ
(ԴԱՏԱԿԱՆ ՔԵՆՁԻ Մ'ՕՐԱԳՐՈՒԹԵՆԵՆ)

(Շար. և վերջ)

Նոյն ամառ բաւական շոգ էր: Արդիչ քամին այրած էր բոյսերը: Մանր փոշիով միշտ լի էր օդը, եւ երկինքն հրագոյն:

Բերիակիւնի տան մէջ ամեն ինչ վատթար կերպարանք մ'զգեցած էր: Պիտոր, ամուսնանալէն յետոյ, բոլորովին փոխուած էր. անդադար կը ծեծէր խեղճ կինն ու կը հայհոյէր, եւ այլ եւս առաջուան լուսկեաց ապուշը չէր. աներոջ հետ ալ սկսած էր կռուիլ: Խեղճ ծերունին կ'զգար իւր ըրած սխալ ընտրութիւնը. բայց խոտովանիլ չէր ուզեր իւր այս մեծ անձնասարսփիւնը: Իւր ամբողջ տնտեսական գործերը Պիտորին յանձնած լինելով, Նգոր իւր կենաց վերջին օրերը աղօթքով եւ եկեղեցի երթալով կ'անցունէր:

Մովս պէս կը հալէր Կատերինա: Ամեն նօրեայ անարգանքն, հայհոյանքն եւ ծեծը բոլորովին ընկճած էին մանկամարդ կինը: Նրեկայ չունէր, եւ իւր կեանքը միատեսակ եւ ձանձրանալի էր: Ամուսնոյն բռնի փաղաքշանքները ծայրագոյն յուսահատութեան մէջ կը ձգէին զայն, այնպէս որ կը խորհէր ինքնասպանութեան դիմել. սակայն կամքի զօրաւոր ոյժ պարտ էր ունենալ ոճրագործութեան դիմելու: Ուստի ամենայն ճիգ կը թափէր մոռնալ իւր թշուառութիւնները:

Ինչ որ ալ լինի, այս աշխարհի մէջ ամեն բան վերջ մը կ'ունենայ: Տօթադին ամբարան սառն աչու՛նը յաջորդած էր: Հին հոգերուն եւ հին շահերուն նորեր փոխանորդած էին:

Նոյեմբեր ամսոյ սկիզբն էր երբ նոր զինւորագրութիւն սկսաւ: Զինուորագրութեան վիճակն ի մէջ այլոց ինկաւ եւ Բերիակիւնի փեսայ Պիտոր Կարծովի վրայ. երեսուն երկու թիւը զայն զինուորներու կարգը դասեց: Այս անգամ բաղդը բանած չէր. ցաւ էր անոր հեռանալ իւր տեղէն, բայց ճար

չունէր: Հրաժեշտի ժամանակ շատ բաներ յանձնարարեց Կատերինայի եւ Նգորի: Վերջաբանի մէջ մինչեւ անգամ սպառնաց կնոջ ըսելով.

— Նթէ իմ բացակայութեան ատեն մէկու մը հետ յարաբերութիւն հաստատես, գիտցիր որ ողջ ողջ կը խեղդեմ քեզ: Իսկ դու, հայր, դարձաւ դէպի աները, լաւ հսկէ վրան ու թէ որ բան մը նշմարես, իսկոյն գրէ ինձ:

Նոր զինուորներու բեռը մեծ չէ. քանի մը բուրլի ճանապարհի համար եւ փոխնորդներ, եւ ուղեւորը պատրաստ է:

Նգոր Պիտորի հետ զօրաժողովի տեղը գնաց. մեկնելու ատեն չէր գիտեր ցաւի՛լ թէ ուրախանալ: Սակայն խորհելով իւր աղջկան վիճակի վրայ, սկսաւ ափսոսալ թէ ինչո՞ւ Կոնստանտին Սկորիի հետ չամուսնացուց իւր աղջիկը:

Ամուսնոյն հեռանալէն ի վեր Կատերինա ազատ կը շնչէր: Զմեռուան երկայն գիշերները բոքն անդադար կը պտըտցնէր ձեռքին մէջ: Մէկը միւսի ետեւէն նորանոր խորհուրդներ կը պտուտէին մտքին մէջ, Կերազէր որ Պիտոր յաւիտենական կերպով զինուորական ծառայութեան մէջ կը մնար, կ'երազէր թէ ինքն ազատ ու անկախ կը դառնայ. . . ի վերջոյ ամենը կարելի չէ ըսել:

Զմեռը թէ եւ շատ ցուրտ չէր, սակայն ձիւնն առատ էր: Շուտով հասաւ գարունը: Զիւնը կը հալէր արագօրէն: Առուակները միանալով գետեր կը կազմէին եւ օղին մէջ կենդանութիւն ու աշխուժութիւն կար:

Կատերինա, որպէս տան միակ տնտեսուհի, կ'աշխատէր անդադար. բայց աշխատութիւնը նորա ներքին զգացումը խեղդելու անկարող եղաւ: Ժամանակ առ ժամանակ դէմք մը կը նկարուէր նորա աչաց առջեւ, եւ այդ միջոցին այտերը կեռաւոր պէս կը կարմրէին ու կ'այրէին. . . Նւս՛ջ մի բանով կ'արելի է յաղթել բնութեան:

Զատիկ օրուան գիշերային լուսութեան մէջ ուրախ ու բարձր լսելի էին Քրիստոսի Յարութիւնը շնորհաւորող օրհներգներ: Նգոր եւ Կատերինա միասին եկեղեցի գնացին: Հայրն եկեղեցի մտաւ, իսկ աղջիկը բաղարջը ձեռքը նախագաւիթը մնաց: Հալիւ

թէ առաւօտեան ժամերգութիւնը վերջացած էր եւ ահա խռովեալ մանկամարդուհւոյն առջեւ կարծես դետնէն բուսաւ Կոնստանտին Սկորի :

— Քրիստոս յարեաւ ի մեռելոց, ըսաւ նա, եւ ոչ-քրիստոնէական կերպով ողջագուրեց զայն :

Պատարագէն յետոյ ծաղկահասակ կինը կատարեւրապէն յուզուած տուն վերադարձաւ : Սիրտը կը բաբախէր եւ արիւնը արագօրէն կը դառնար երակներուն մէջ : Անդադար կը ցնցուէին ջիւղերը . ամենադոյզն չչուկը սարսուռ կը պատճառէր անոր . այտերը կը բորբոքէին տաքութենէ եւ մարմնական տանջանք մը, քաղց մը կ'զգար :

Փանի մ'օրէ յետոյ, ծերունիի բացակայութենէն օգուտ քաղելով, Կոնստանտին Սկորի, երեկոյ մը Ռեբիակինի խրճիթի պատին քով կանգնած Կատերինայէն կը խնդրէր դուրս ելնել, զի երկու խօսք պիտի ըսէր : Սէրը զօրեղագոյն էր քան նորա տկար ու անզօր կամքը : Դուրս ելաւ : Սակայն երկու լրելով մի գուցէ յանկարծ իւր վիզը փաթթուի,

— Հեռացի՛ր, անպիտան, ըսաւ խղճուկ ձայնով մը, ի՞նչ պիտի ըսեն դրացիք եթէ քեզ այստեղ խփով տեսնեն :

— Եթէ խնդրը դրացիներու վրայ է, պատասխանեց Կոնստանտին պատէն վար ցատկելով, կը նշանակէ թէ կարելի է կենակցիլ :

Եւ ահա երկուսն ալ խրճիթի դրան առջեւ հասան . այդ վարկեանէն իրարու կը վերաբերէին :

Եւ այնուհետեւ ո՛չ հայրական խիստ խօսքերն, ո՛չ դրացեաց ծաղրն, ո՛չ պատասխանատուութիւնն ամուսնոյն առաջ, անկարող էին սանձել զԿատերինա . գրեթէ համարձակ կը կենակցէր Կոնստանտինի հետ : Տարին չլրացած որդի մ'ունեցան, որով աւելի՛ եւս ամրացաւ նոցա սէրը : Մինչեւ անգամ Եգոր իւր թուան ծննդեամբ կարծես թէ հաշտուեցաւ պարագայներուն հետ եւ աղջկան բացակայութեան ժամանակ սիրայօժար թեւերուն մէջ կը խաղցնէր մանկիկն :

Գործերն այս վիճակի մէջ էին երբ անգամ մը Ակսինեայի կերպարանքով երեւոյթ մը ներս մտաւ խրճիթէն : Եւ յիշաւ այդ

առաւել տեսիլք էր՝ քան թէ Ակսինեա Վալէլադէմ՝ եւ դեղեցկատեսիլ կնոջ մը փոխարէն աւերակ մը կը ներկայանար Եգորի : Երեսը խորշոմներով պատած, մէջքը կորացած եւ ձայնը խռպոտ եւ հազիւ լսելի էր :

— Թոյլ տուր որ տան մէջ մեռնիմ, ըսաւ Եգորի :

Եգոր ձեռները միայն շարժեց, եւ տեղ տուաւ օրորոցին ըով :

Վերջապէս Աստուած գթաց Ռեբիակինի ընտանեաց վրայ : Պիտոր իւր մեկնելէն երեք ամիս յետոյ նամակ մը գրեց, իսկ այնուհետեւ բոլորովին ձայնը կտրեց, եւ ոչ մի լուր չըկար անկէ : Շատ անգամ խորհած էին թէ Թուրքաց դէմ մղուած պատերազմի մը մէջ մեռած էր նա : Սակայն կառավարութիւնն իւրաքանչիւր սպաննուած զինուորի վրայ տեղեկութիւններ կը հաղորդէր իւր ընտանեաց, իսկ Պիտոր Կարժովի մասին այդպիսի լուր մ'երբէք տրուած չէր :

Թուր հաշտեցուցած էր Եգոր Ակսինեայի հետ, որպէս առաջ դատեր հետ հաշտեցուցած էր : Շուտով Կոնստանտինի մայրն ալ սկսաւ ամեն օր յաճախել Ռեբիակինի խրճիթն, երբեմն կարկանդակ, կաթնաշուշ եւ երբեմն այլ բաներ տանելով իւր հետ : Իսկ Կոնստանտին եւ Կատերինա ամբողջ աւանին երջանկագոյն արարածներն էին : Կոնստանտին արդէն մտադիր էր տընակ մը շինել որպէս զի Կատերինա իւր քով տանի եւ օրինաւոր առն եւ կնոջ պէս ապրին միասին : Նոցա մանկիկն արդէն մի տարեկան եղած էր, բայց Կատերինա կը շարունակէր ծիծ տալ . մանուկը կ'աճէր եւ շատ նման էր իւր հօր :

Աշնանային երեկոյ մը երկու ընտանիքն եւս Ռեբիակինի տան մէջ համախառնուած էին : Կոնստանտին բարձր ձայնով կրօնական գիրք մը կը կարդար, Եգոր խորին ուշադրութեամբ մտիկ կ'ընէր, իսկ կանայք զանազան գործերով զբաղեալ էին : Յանկարծ շուները սկսան հաչել, ամենքն ալ սարսուռով դուրս նայեցան . Կատերինա դուրս ելաւ եւ վերադարձաւ իսկոյն, սարսափահար դէմքով :

— Յարգանքներս կը մատուցանեմ աղնիւ ընկերութեանդ, դոչեց Պիտոր Կարժովի շարագուշակ եւ գինովութենէ երերուն ձայ-

նը : Հա՛, կ'երեւի ինձ ամենեւին չէիք սպասեր, աղաւնեակներս, այնպէս չէ՞ : Ի՞նչ կ'ընես, ծերուկ սատանայ, դարձաւ աներոջ, կինս պահպանեցի՞ր ինչպէս պատուիրած էիրսէ նայինք, այս շան լակոտն ո՛ւրտեղէն երեւցաւ խրճիթիդ մէջ . . . Դուրս ելէք այստեղէն, դուաց Կոնստանտին Սկորրի եւ անոր մօր դառնալով :

Վերջին երկուքը փութացին դուրս ելնել իսկոյն :

— Կատեա, եկուր հանէ՛ կօշիկներս :

Կատերինա վազեց կատարել իւր ամուսնոյն հրամանը : Կօշիկները նեղ էին, եւ բոլորովին ցեխոտ լինելով՝ խեղճ կնոջ ձեռներէն միշտ կը սահէին :

— Անպիտան արարած, սիրահարներ պահել կարող, իսկ ամուսնոյդ կօշիկները հանելու անկարող ես. ահաւասիկ քեզ, ըսաւ Պիտոր հաստ ձայնով, և ոտքով թշուառ կնոջ երեսին հարուած մը տուաւ :

Սրիւնաթուրմ եւ տղմաթաթաւ գլորեցաւ Կատերինա տախտակամածի վրայ :

Տակաւին երկար ժամանակ կը հնչէին գինով գինուորի հայհոյանքները, մինչեւ որ քունն ու յոգնածութիւնը փակեցին անոր աչքերը :

Այս գիշեր ընտանեաց բոլոր անդամները շատ անհանգիստ քուն ունեցան : Կերեւէր թէ Պիտոր առաջին անգամ տեղի ունեցած պատերազմի մը ժամանակ ոտքէն վիրաւորուելով՝ երկար ժամանակ պառկած էր հիւանդանոցի մէջ եւ յետոյ գինուորական ծառայութեան անընդունակ լինելուն համար արձակուած : Պիտորի վերադարձը Կատերինայի եւ Եգորի մեղաց երկնառաք պատուհասը կ'երեւէր : Բայց Ակսինեա համաձայն չէր այս գաղափարին . ըստ իւր կարծեաց՝ Սկորրի առաւել իրաւունք ունէր Կատերինայի վրայ քան Կարժով : Սակայն ոչ ոք կը հարցնէր նորա կամքն : Առաջին օրէն սկսեալ Պիտոր կը պահանջէր որպէս զի կ'ինն իւր քով պառկի գիշերները : Կատերինա անխօս կատարելով ամուսնոյն բոլոր հրամանները, վերջին պահանջման համաձայն չէր : Եւ նորա ամբողջ ջիւղերն ոտք կ'ենէին սոյն պահանջման դէմ :

Պիտորի ոտներն ահռելի վէրքերով պատած էին եւ այնպիսի դէշ հոտ կը բուրէին որ անկարելի էր բոսկէ մ'անգամ կենալ նորա

բնակած սենեկի մէջ : Այս պատճառաւ Կատերինայի ատելութիւնը ծայրագոյն աստիճանի հասած էր . ամեն օր նոցա միջեւ անլուր եւ խիստ կռիւներ տեղի կ'ունենային, այնպէս որ ամենաչնչին պարագայի առթիւ Կատերինա միշտ կը ծեծուէր . սակայն այս ամեն նախատանաց եւ անարգանաց արհամարհանօք կը համբերէր . միայն երբ մօր հետ միայնակ մնար, կ'ըսէր թէ, եթէ որդի չունենար, վաղուց անձնասպանութեան դիմած էր :

Գժտութիւնը հետզհետէ աւելի եւ աւելի կը ծանրանար : Կարժով ծերունոյն բացակայութեան ժամանակ սկսաւ սարսափելի տանջանքներ տալ կնոջ . երբեմն սիւնէն կը կապէր զայն եւ երբեմն գերաններէն կը կախէր պարանով : Կատերինա այլ ևս նախկին գեղադէմ, վայելուչ եւ ծաղկահասակ արարածը չէր, այլ նորա շուքը միայն մնացած էր :

Եգոր ինքզինք կորուսած էր : Կարծես աշխարհը նորա համար գոյութիւն ունենալէ դադրած էր : Ամենեւին միջամուխ չէր լիներ դատեր եւ ամուսնոյ գործերուն եւ կարծես նորա համակրութիւնն աւելի Պիտորի քան թէ Կատերինայի կողմն էր : « Զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ » կը մրմնար միշտ ակռաները սեղմած :

Սակայն Ակսինեա այդպէս չէր խորհեր : Դատեր կրած բարբարոսական տանջանքները տեսնելու ժամանակ մօր սիրտը կտոր կտոր կը լինէր : Շատ անգամներ Պիտորի ըսաւ որ իւր վարձուքը փոխէ, բայց նա լսել իսկ չուզեց եւ մինչեւ անգամ զայն ևս ծեծել սկսաւ : Այն ատեն ծերունի կընոջ սրտին մէջ սարսափելի ատելութիւն մը ծնաւ փեսային նկատմամբ . հին սովորութիւնը ձեռք առաւ, սկսաւ արբենալ եւ միջոցներ խորհիլ փեսայէն վրէժ լուծելու : Զօրութիւն չունենալով իւր քստմնելի դադափարն ի գործ դնել, իրեն գործակից գըտաւ զԿոնստանտին Սկորրի : Այնուհետեւ ամեն օր սկսաւ յաճախել Սկորրի քով եւ պատմել այն սարսափելի տանջանքները զորս կը կրէր Կատերինա :

— Դու միայն կարող ես ազատել մեզ այդ չարագործէն :

Բայց Սկորրի արդէն Կարժովի վերադարձէն ի վեր դառն ատելութեամբ լցուած էր

վերջնայն դէմ եւ կերպով մը կ'ուզէր նորա գլուխը ուտել: Այլ իւր բոլոր ցնորքները, բոլոր ծրագիրները կատարինայի կեանքն ազատելու համար, ծուխի պէս կը ցնդէին օդի մէջ:

Սիրած կիներն եւ որդիին այլ եւս չէին պատկաներ իրեն, Կը տանջուէր նոցա համար եւ հնարք մը կը փնտռէր ազատելու համար սոյն անեղանելի դրութենէն: Խորհուրդ մ'ունէր, արիւնալի՜ խորհուրդ մը:

Սկորի մարդկութենէ ելած էր. դաժան եւ տխուր էր, միշտ խրճիթի մէջ նստած: Հարկ անհրաժեշտ եղած ատեն միայն կ'երեւէր մարդոց: Սիրտը կարծես մամուլի տակ կը ճնշուէր. եղեռնական գաղափար մը կ'անցնէր մտքէն եւ ուժեղ ձեռները երբեմն կը դողդղային: Ժամանակէ մ'ի վեր սուրը նորա անբաժան ընկերն եղած էր: Գրեթէ վճռած էր նախ Կատերինան ըստպանել եւ յետոյ դինքն: Այս նպատակաւ անգամ մ'ամբողջ մը երեկոյ Բեքիակիւնի տան քով կ'սպասէր Կատերինայի դուրս ելնելուն, բայց բաղդը կը պահպանէր մանկամարդ կնոջ կեանքն: Երկու անգամ դուրս ելաւ, երկու անգամն եւս մանուկը կրծքին եւ սուրը կ'իյնար մարդասպանի ձեռքէն:

Ձմեռուան մէջ տօն օր մ'էր: Երեկոյեան դէմ չուկայ կ'երթար Կարժով: Բեքիակիւնի ընտանիքը ցերեկը տեղ մը յուզարկաւորութեան գացած էր:

Ըստ սովորութեան, Ակսինեա արբեցած էր: Ամէնքը լոյն նստած էին ընթրիքի եւ ապա շուտով պառկեցան ննջելու: Եգոր վառարանի վրայ պառկեցաւ, Ակսինեա տան մի անկիւնն, իսկ Կատերինա իւր գաւկին հետ յատակի վրայ: Գիշերուան ժամ տասնին Պիոտր տուն վերադարձաւ վերջին աստիճան գինով. հագուստն հանելով իւր շինած մահճակալի վրայ պառկեցաւ: Լուսինն արօտ կը լուսաւորէր քնացողներու դէմքերը թափանցիկ լուսամուտներէն: Գիտնալով որ կինը յատակի վրայ պառկած էր, գրեթէ քնքոյշ ձայնիւ մ'ըսաւ.

— Կատերինա, երթանք իմ սենեակս:

Կատերինա սարսուռահար նայեցաւ անոր եւ գլուխը վերմակի տակ խոթեց: Դժոխային չարութիւն մը պատեց զինուորի դէմքն. ոտքով բարբարոս հարուած մը աւելաւ խեղճ կնոջ կողերուն, որ ողորմագին ճիչ

մ'արձակեց. եւ ապա նորէն խոր լռութիւ տիրեց: Կատերինա պառկած էր ուշաթափ: Կարժով ողորմելոյն մագերէն բռնած կը քարէր իւր սենեակը: Եւ դուռը կրկին փակուեցաւ . . . :

Եգոր կը քնանար. արթուն էր միայն Ակսինեա. նորա բոլոր զգացմունք յուզուած էին աղջկան վրայ կատարուած բռնութեան համար: Կէս ժամ սպասելէ յետոյ կամաց մ'երաւ տեղէն, մուշտակը վրան առաւ եւ Կարժովի սենեակը մտաւ, ուր Պիոտր մեռեալի պէս կը քնանար: Ակսինեա աւելի լաւ սկսաւ ուշադրութիւն դարձնել ննջողի կանոնաւոր շնչառութեան. ապա հաստատուն քայլերով դուրս ելաւ եւ մեկնեցաւ Կոնստանտին Սկորիի խրճիթը:

— Տե՛ս, փողոցի միւս կողմէն տես ո՞վ կ'անցնի, ըսաւ իւր ամուսնոյն Բեքիակիւնի տան դէմ առ դէմ բնակող դրացուհին, որ իւր մանկան լացէն արթնցած էր:

Ամուսինն ելաւ եւ փոքրիկ լուսամուտէն սկսաւ դիտել եւ յօրանջելով պատասխանեց.

— Գինով Ակսինեան է, Սկորիի քով կ'երթայ երեւի օդի խնդրելու:

Ակսինեա երբ մօտեցաւ Սկորիի խրճիթին, Կոնստանտին տակաւին արթուն էր, լուսամուտի քով նստած, գլուխը մուսլ խորհուրդներով պատած: « Ի՛նչ ընելու է, կ'ըսէր ինքնիրեն, գլուխս առնեմ երթամ, բայց ո՛ւր երթամ. հապա կի՛նս, հապա որդի՛ս »: Դէմքը կը բորբոքէր, աչքերը սոսկալի կերպով կը փայլէին:

Այս միջոցին զգուշաւոր կերպով լուսամուտը դարկին, որմէ դող ելաւ Կոնստանտին:

— Արդեօք բա՞ն մը պատահած է Կատերինայի, ըսաւ մոռովի եւ տեղէն դուրս ցատկեց:

— Կամա՛ց, կամա՛ց, թշուառ տղայ, ըսաւ Ակսինեա անոր առաջքն առնելով:

Նստելէ յետոյ, արտասուալից աչքերով պատմեց տան մէջ պատահածը:

— Ալ չեմ կարող համբերել Կատերինայի կրած տանջանքներուն: Ես ոյժ չունիմ հաշիւս անոր հետ վերջացնելու: Ալ ի՞նչ կ'սպասես: Երբ ելայ տունէն, մեռելի պէս կը քնանար, ըսաւ Ակսինեա աւարտելով իւր պատմութիւնը:

Որքան կը խօսէր, այնքան աւելի եւս կը կարմրէր ու կ'այլալուէր Կոնստանտին. Պիոտրի այս վերջին գաղափարներն ալ կատարեցուց զայն:

— Ուր կը քնանայ, հարցուց շտապաւ:

— Մենք ամենքս խրճիթին մէջ կը քնանանք, իսկ նա միայնակ դրսի սենեակը կը պառկի, պատասխանեց պառաւը:

Խօսակցութիւնն այս տեղ վերջացաւ: Ակսինեա մեծ գգուշութեամբ իւր խրճիթը վերադարձաւ: Ամենքն ալ խոր քնով կը քնանային տակաւին: Ակսինեա քնանալ չէր կարող. սիրտն անհանգիստ էր եւ արագ կը բաբախէր: Եւ հաճախ կը լսէր թէ Պիոտրի սենեկի դուռը կը բացուի եւ Պիոտրի մահճակալը կը ճրճուար: Նորա երեւակայութեան մէջ պատկերացած էր ոճրագործութեան սարսափելի տեսարանը, կը տեսնէր զոհի տկար ընդդիմադրութիւնը, կը լսէր Պիոտրի յուսահատ հեծեծանքը, աղաղակն. « Օգնեցէք »: Պառաւը նուաղեցաւ:

Երբ քիչ մը ժամանակ անցնելէ յետոյ ուշաբերեցաւ, խրճիթին մէջ ամեն ինչ խաղաղ եւ լռին էր: Լուսինն առաջուան պէս կ'արծաթէր գետինը, Ակսինեա գլուխը ծածկած քնացաւ:

Միայն երբ արշալոյսը բացուեցաւ, Կատերինա ելաւ անասուններուն կեր տալու: Ամուսնոյն սենեկին մօտէն անցնելուն տեսաւ զայն թաղիքի մէջ փաթթուած. երբ խրճիթը վերադարձաւ, հայրն արթնցած էր:

— Պիոտրն արթնցուր, ըսաւ Եգոր աղջկան:

Կատերինա Պիոտրի սենեակը մտաւ, մօտեցաւ մահճակալին եւ թաղիքը վերցուց վրայէն: Զարհուրելի ճիւղ մ'արձակեց իսկոյն. եւ փութով խրճիթ մտնելով դռնեց սարսափահար:

— Հայր, սպաննած են զայն:

Պիոտր մէջքի վրայ ինկած կը պառկէր, ձեռները փռուած. լայն կերպով բացուած աչքերը կը նայէին անասնաբուծութեան լեզուն ատամներուն մէջ ճմուռած էր, յիշելով վրայ, կոկորդի երկու կողմերը, երկու կարմիր բիծեր կ'երեւէին:

Եգոր, ուշի ուշով դիակը դիտելէ յետոյ, արագաբար քահանայի մօտ վազեց:

— Տէր հայր, ըսաւ վերջնոյս, կինս եւ աղջիկս սպաննած են Պիոտրն:

Քահանան եւ Եգոր իսկոյն տեղական վարչութեան ներկայացան եւ նոյն ժամայն ձերբակալուեցան Ակսինեա, Կոնստանտին եւ Կատերինա: Ակսինեա առանց թոյլ տալու որ քննիչ դատաւորն դիմէ քննութեան, անձամբ յայտարարեց.

— Այս ամենն էս ըրած եմ: Ես սպաննեցի Պիոտրը. իսկ Սկորի եւ աղջիկս անմեղ են:

Քննութիւնն երկար չտեւեց: Երկու վրկայներ, կին եւ ամուսին, որք Բեթիակինի պան դէմ առ դէմ կը բնակէին, հաստատեցին թէ գիշերուան կէսին տեսան որ Ակսինեա Սկորի խրճիթը կ'երթար: Բաց աստի անկասկած էր որ պառաւն միայնակ առանց աղմուկ հանելու անկարող էր գործն այսպէս վերջացնել Պիոտրի հետ, այլ միայն Կոնստանտին կարող էր խեղդել զայն, այնպէս որ նորա աղաղակները չէին կրցած արթննալ Եգորը: Սկորիի վրայ ծանրացած ամբաստանութիւն անով ալ հաստատութիւն կը գտնէր որ նորա թիւ վրայ ճանկրտուք մը կ'երեւար, որ մինչեւ այն ատեն չկար: Եգոր կը պնդէր թէ փեսան եւ իւր աղջիկը գիշերը միասին պառկած են, եւ կ'ըսէր թէ իւր կինն եւ աղջիկը գործակից են սպանութեան: Սկորի կը պնդէր թէ Ակսինեա նոյն գիշեր իւր մօտ եկած չէ եւ թէ ինք ամենեւին տեղեակ չէ այդ ոճրագործութեան: Կատերինայի փաստը շատ կարճ էր:

— Աստուծով կ'երդնում, կ'ըսէր դատարանի մէջ, որ ամուսնոյս սպանութեան ամենեւին դործակից եղած չեմ:

Գալով այն հարցին թէ հապա ո՞վ էր ըստաննած, պատասխանել չէր ուզեր:

Քննիչ դատաւորը Պիոտրի սպանութեան գործին մէջ Ակսինեայէն եւ Կոնստանտինէն զատ Կատերինան եւս յանցապարտ դատելով երեքն ալ աքսորանաց եւ շղթայակալ աշխատութեան դատապարտեցին: ԶԿատերինա ճանաչելով որպէս իւր ամուսինն սպաննող, նորա շղթայակալ աշխատութեան ժամանակամիջոցը ամենաբարձր նշանակեցին:

Թարգմ. Ռուսերէնէ Պ. Տ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ի ՊԻՒԼՊԻՒԼԷ ԱՌ ՎԱՐԴՆ

(Ի Յակոբ վարժապետէ ասացեալ⁽¹⁾)

Վարանեալ շրջիմ խելագար,
Ի ծառոց ի ծառս անդադար.
Լեր վշտաց սրտիս մխիթար,
Նազելի վարդ իմ նազելի:

Գամ պահու գիշերի,
Նինջ աչացս առ իս ոչ բերի.
Այց արա արտասուեացս սորի,
Նազելի վարդ իմ նազելի:

Կարօտիւ եմ սիրահարեալ
Կարմրերանդ թերթիցդ ծալծալեալ.
Զովացո՞ գհոգիս խորովեալ,
Նազելի վարդ իմ նազելի:

Թէ բացեալ ըղտեադ ինձ ցուցես,
Յանկալի հոտիկդ բուրեցես,
Յայնժամ դիս կենդանի դտցես,
Գովելի վարդ իմ գովելի:

Ի ԼՈՒՍՆԵԿԷ ԱՌ ՎԱՐԴՆ

(Ի Յակոբ տրուպ վարժապետէ)

Մինչեւ յե՞րբ դու յերբ թախեա գհոգիս,
Աչացս արտասուեաց ընդէ՞ր ոչ յադիս,
Նազելի վարդ իմ զուարճացո զայդիս:

Ահա մեռանիմ քոյին կարօտիւ,
Մի՛ լինիր այրող սրտիս աղետիւ:

Գեղեցիկ գեղ քո հանուրց հաճելի,
Հոտ անուշութեանդ մարդկան տարփալի,
Յոյց ինձ գտեսիլդ անձիս տրտմալի:

Ահա մեռանիմ քոյին կարօտիւ,
Մի՛ լինիր այրող սրտիս աղետիւ:

(¹) Յակոբ վարժապետի երգեր դեռ ի լոյս չեն
ընծայուած. ասոնցմէ շատեր օրինակած եմ գրչա-
գիրներէ. հետզհետէ պիտի փութամ զրկել:

Ի խելաց թախեալ ի վայրս վարանիմ,
Մոլորեալ մոռք աստ անդ տատանիմ,
Հուր սիրոյդ առ իս տոչորեալ տանիմ:

Ահա մեռանիմ քոյին կարօտիւ,
Մի՛ լինիր այրող սրտիս աղետիւ:

Հասիր ի յետին ի յետին շնչիս,
Գթա խղճալի ձայնիս կարկաչիս,
Լեր առողջարար ցաւոց անողջիս:

Ահա մեռանիմ քոյին կարօտիւ,
Մի՛ լինիր այրող սրտիս աղետիւ:

Հասեաց
Հ. ԵԿԻՆԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՐՕՆՔ ՆԱԽԿԻՆ ԵԳԻՊՏԱՅԻՈՅ
ՎԱՍՆ ԱՊԱՌՆԻ ԿԵՆԱՅ

Ապառնի կենաց հաւատքը եգիպտական
կրօնի մի երեւելի սկզբունքն է: Նոքա կ'ու-
սուցանէին թէ՛ մարդոյ հոգին յետ մահուան
անմիջապէս կ'իջնէր Ամենդին, եւ կը տար-
ուէր « ճշմարտութեան ատեանը », ուր ի
ներկայութիւն 20 զիւրիսին եւ նորա « Տեարք
ճշմարտութեան և Դատաւորք մեռելոց » յոր-
ջորջեալ քառասուն երկու դատողակցաց, կը
դատուէր: ³Անիւպիւս՝ որ կը կոչուէր « Վա-
րիչն կըսոց », կըսորդ մը բերելով եւ նժարի
միոյն մէջ ճշմարտութեան իբրու նշան կամ
ձեւ մը դնելէն զկնի, միւսին մէջ հանգու-
ցելոյն բարի գործերն պարունակող անօթ
մը կը դնէր, մինչ ⁴Թօթհ կը կենար իւր
ձեռքին մէջ տախտակ մը բռնած, որոյ վե-
րայ հանդուցելոյն դատակնիքն կ'արձանա-
գրէր: Եթէ բարեգործութիւնը բաւական
էին եւ կըստթաթն ծանրացնելու չափ ըլ-
լային, յայնժամ երանելի հոգւոյն թոյլ կը

- | | |
|-------------|---|
| 1 Ամենդի. | Ստորին աշխարհ: |
| 2 Օղբրիս. | Մշտնջենաւոր Նախագահ-Տէր
եւ թագաւոր Ամենդիին: |
| 3 Անիւպիւս. | Որդի Օղբրիսի: |
| 4 Թօթհ. | Աստուած գիտութեանց և ար-
ուեստից: |

տրուէր մտնել « Կենաց նաւակն » եւ բարի հոգիներով կ'առաջնորդուէր « Սահլու կամ Եղիուսեան դաշտերն » վայելել « Խաղաղութեան լճակներն եւ երանութեան բնակարաններն » : Եւ ընդհակառակն եթէ բարեգործութիւնը անբաւական լինելով կշռութաթն յօդս առ կախ մնար, յայնժամ թըռուառ հոգին կը դատապարտուէր ըստ իւր չար գործոց արժանեաց, նուազ կամ առաւել անմաքուր կենդանեաց մարմնոց. փոխուելով, փոփոխութեանց թիւը, բնութիւնը եւ տեւողութիւնը հանգուցելոյն մեղաց աստիճանէն, իւր արժանացած պատժոյն սաստկութենէն եւ տեւողութենէն եւ կամ իրեն պէտք եղած սրբութենէն կախեալ լինելով : Ի վախճանի, եթէ շատ փորձերէ յետոյ բաւական մաքրութիւն չստանար չար հոգին որ ինքզինքն անբուժելի ցուցուցեր էր, մեռելոց թաղաւոր Օղիւրիսի ձեռամբ կ'ընդունէր վերջին վճիռ մ'եւ կատարեալ ու անթերի ոչնչութեան դատապարտուած ըլլալով կը կորսուէր Դժուին ոտիցը տակ : Բարի հոգին նախ իւր չորս կտակադէմ գիււաց առաջնորդութեամբ « Մաքրիչ կրակի աւաղան » էն անցնելով՝ իւր յանցանքներէն ազատուած՝ Օղիւրիսի ընկեր կ'ըլլար երեք հազար տարւոյ ժամանակամիջոցով. եւ յետ այնորիկ, Ամէնդիէն կը վերադառնար եւ վերըստին իւր նախկին մարմինը կը մտնէր. մեռելներէն յարութիւն առած, կրկին երկրիս վրայ մարդկային կեանք կ'անցունէր : Սոյն ընթացքն կրկին եւ կրկին կը շարունակուէր մինչեւ այս ինչ չափ տարիներու խորհրդաւոր չըջան մը կատարուէր, եւ երբ բոլորն աւարտէր, բարին եւ երանելին կը ժամանէր Աստուծոյ հետ միանալու վերջին ուրախութեան վերածուելով աստուածային էութեան, յորմէ ժամանակաւ բղխեալ էր, եւ այսպէս իւրեանց գոյութեան լի կատարելութեան եւ ճշմարիտ վախճանին կը հասնէին :

Իւրեանց ապառնի կենաց հաւատովն եւ բարի ու չար հոգւոց բազմին նկատմամբ եղած գաղափարներովն պարտաւորեալ էին ամենահաստատ կերպով մեռելոց համար

իւրեանց կարգադրութեանց եւ բազմահոգ եւ ճարտարագործ գերեզմանաց պատրաստութեանը. որովհետեւ իւրաքանչիւր ոք կը յուսար Սահլուին մէջ ընդունուողաց թըռայն մէջ ըլլալ եւ Օղիւրիսին հետ երեք հազար տարի բնակելէն յետոյ պիտի վերադառնային յերկիր կրկին մտնելու իւրեանց հին մարմիններն : Ուստի հարկաւոր էր որ մարմինը կարողանային տոկալ այդ երկայն միջոցին, եւ պալատանելէն եւ կտաւով պատելէն յետոյ կը թաղէին քարաշէն տապանի մը մէջ խուփերով պատած զոր հազիւ կարելի էր վերցնել կամ շարժել : Ուստի եթէ մարդ մը հարուստ ըլլար, զինքն ապահով եւ վայելուչ ընելու համար ահագին գումարներ կը վտանէր գեղեցիկ եւ գեղեցկազարդ տապան մը կամ իւր տապանին վրայ բուրդ մը կառուցանել, կամ պինդ ապառաժի մէջ փոս փորել եւ պատրաստել իւր հանգըստատեղեւոյն համար հեռաւոր խուց մը, երկար շարք մը՝ սրահներու ծայրը : Հոգ կը տանէր « մեռելոց մաշտոց » յորջորջեալ սըրբազան գրքէն ամենակարեւոր համարներ ունենալ կա'մ իւր պառկելու տապանին ներքին կողմը գրուած, կա'մ մուսկական կապանաց վրայ նկարուած եւ կա'մ իւր գերեզմանին ներքին պատերուն վրայ փորագրուած, հաւանականաբար այն նշանակութեամբ որ պիտի նպաստէր իրեն իւր Ամէնդիէն Սահլու անցած միջոցին : Երբեմն մինչեւ անգամ գրքին ամբողջ մի օրինակը իւր հետ կը թաղուէր, անտարակոյս այն նկատմամբ որ եթէ յիշողութենէն ելնէր ուղիղ մաղթանքն կամ աղօթքն իւր երկար ճանբորդութեան վտանգաւոր մասերուն մէջ, յիշեցնէր իրեն :

Գ. Զ.

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԼՐՈՅ

19-26 ԱՊՐԻԼ 1885

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

¹ Ասհլու. Բնակարան առաքինի անձանց եւ գիւցազանց յետ մահուան :

² Դժու. Տէր լուսոյ :

Անգլո - ռուսական վէճին նկատմամբ շար-
թուս մէջ առնուած հեռագիրք խաղաղու-
թեան պահպանման յոյսերը զօրացուցին

զգալապէս : Խնդիրն երկուք էր . Բէնչտէհի առումը Քոմարոֆ զօրավարէն եւ ռուսո-տփղան սահմանազլխոյն դժուար : Բէնչտէհի առման նկատմամբ Քոմարոֆ զօրավարի եւ Սըր Լըմատէնի տեղեկագրութիւնը հակասական էին : Ռուսիա՝ զինուորական պատ-ւոյ հակառակ կը համարէր քննութիւն մը կատարել իւր զօրավարին արարքներուն վըրայ . հետեւապէս այս կէտ իրաւարարու-թեան պիտի ենթարկի եւ իրաւարար պիտի լինի Վիլհէլմ կայսրն :

Իսկ երկրորդ կէտին վրայ բանակցու-թիւնը վերսկսած են յաջող պայմանաց մէջ : Անգլիա կը գիջանի անկարեւոր կէտերու մէջ , խաղաղութեան սիրոյն համար : Նախ ետ կը կոչէ զՍըր Լըմատէն իւր 13,000 զօր-քերով եւ հետեւորդներով : Այս զինուորա-կան մարմնոյ ներկայութիւնը փուշ եղած էր Ռուս կառավարութեան աչքին : Բա-նակցութիւնը այսուհետեւ Լոնտրայի մէջ պի-տի կատարուին , ռուսի Սըր Լըմատէն Լոնտ-րա կոչուած է , ուր առաւել պէտք կայ իւր ներկայութեան քան Հէրաթի կողմերը :

Չմոռնանք յարելու որ եթէ համաձայ-նութիւն հաստատուի երկրորդ կէտին վրայ , առաջին կէտը կը կորուսանէ զիւր կարեւո-րութիւն :

— Պօֆօր Էթէթօնէն լրագրոյ միջադէպը կարգադրուեցաւ ի կատարեալ գոհունա-կութիւն Ֆրանսայի :

Մայիս 3ին Գահիրէի մէջ տեղի ունե-ցաւ , ըստ կանխորոշ կարգադրութեան , Նուպար փաշայի պաշտօնական այցելութիւ-նը Ֆրանսայի ներկայացուցչին , որում ցաւ յայտնեց Պօֆօր Էթէթօնէնի սպարանին փակ-ման համար : Պ. Սէն Ուրնէ Թայանտիէ ապա զնաց այցելութիւն տալ Խախլին , որում ծանոյց թէ Ֆրանսա կը վերսկսի իւր պաշ-տօնական յարաբերութիւններ Եգիպտոսի հետ :

— Բ. Դուռն հարկ չի տեսներ , կ'ըսեն եւրոպական լրագիրք , իւր չհղբութեան մասին ծանուցեալ յայտարարութիւնն ուղ-ղել Տէրութեանց , Լոնտրայէ եկած խաղա-ղական լրոց պատճառաւ՝ որք պատերազմի երկիւղները կը փարատեն :

— Պէլճիոյ խորհրդարանն աշտօնեց զլէո-բոյտ Թագաւորը լինիլ զլուս Քոնկոյի մէջ Ափրիկեան Պետութեան , Պէլճիոյ եւ Քոն-

կոյի միջեւ միութիւնը լոկ անձնական լինե-լու պայմանաւ :

— Գերմանացի մեծահռչակ ալխարհա-դիր Տոքթ. Նախտիկալ , որ գերմանական դրօշը պարզեց Քամէրունի վրայ , մեռած է յԱրեւմտեան Ափրիկէ :

— Անգլիոյ Երեսփոխանաց Ժողովոյն ապ-րիլ 27ի նստին մէջ Պ. Կլատսթոն նախ հեր-քեց անոնց կարծիքն որք կ'ուզէին Սուտա-նի համար խնդրուած վարկն անջատել Ռու-սիոյ համար խնդրուած « մասնաւոր պատ-րաստութեանց » վարկէն , իրարմէ զատելու համար Սուտանի եւ Աֆղանստանի խնդի-րները : Պ. Կլատսթոն յայտարարեց թէ այս « մասնաւոր պատրաստութեանց » համար խնդրուած 6½ միլիոն ոսկին չպիտի յատ-կանայ բնաւ Սուտանի . բայց Սուտանի համար խնդրուած 4½ միլիոն ոսկին ի հար-կին պիտի կրնայ յատկանալ « մասնաւոր պատրաստութեանց » : 186ի դէմ 229 ձայ-նիւ մերժուեցաւ անջատման առաջարկն եւ յանձնաւ Պ. Կլատսթոն խօսեցաւ ի պաշտ-պանութիւն 11 միլիոն վարկին :

— Հունգարական լրագիրք միահամուռ կը պաշտպանեն Անգլիոյ դատն եւ կը պար-սաւեն Ռուսիոյ ընթացքն : Աւստրիական մամուլն եւս ընդհանրապէս անգլիասէր է :

— Գերմանիոյ Գաշնկցային Խորհուրդն ընդունեց քաղաքական ոճրագործներն եւ յանցաւորները փոխադարձաբար յանձնե-լու համար Ռուսիոյ հետ կնքուած դաշնա-գիրը :

— Վիլհէլմ կայսրն ապրիլ 27ին զնաց Պէրլինի անգլիական դեսպանատունն , ան-ձամբ շնորհաւորելու զՊ. Մէլէթ՝ անգլիա-կան դեսպանն , իւր ամուսնութեան առ-թիւ : Երբ Ն. Վեհափառութիւն կառքէն վար կ'իջնէր , պատսնի մը փորձեց կառքին մէջ մտնել : Անմիջապէս ձերբակալուեցաւ եւ հասկցուեցաւ թէ 17 ամեայ խուլ-համր մ'էր , արհեստիւ նկարիչ յախճապակոյ , որ վայրկենական յիմարութիւն մ'ունեցած էր :

Պատանւոյն վրայէն գէնք չգտնուեցաւ :

— Ֆրանսայի նախորդ նախարարապետ Պ. Ժիւլ Ֆէրրի Հոմ հասած է , ուր կ'ըն-դունի Խոսքացի նախարարաց եւ քաղաքա-գիտաց այցելութիւններն , բայց լրագրա-պետ չընդունիր բնաւ , ըսելով թէ հանգըս-տեան պէտք ունի :

— Յունական բոլոր դեսպանք ետ կանչուեցան, խնայողութեան համար. առաջին քարտուղարք պիտի վարեն դեսպանութիւնները: Կ. Պոլսոյ յունական դեսպանութիւնը միայն զերծ մնաց այս տնօրինութենէն:

— Պրիէր տը լիլ զօրավարէն առնուած նոր հեռագիր մը կը հաստատէ թէ Զինացիք պարպեր են զլանկ Սոն, ուստից անցեալները վանած էին Ֆրանսացիներն, եւ թէ Ֆրանքօ-չինական հաշտութեան պայմանք կանոնաւորապէս գործադրուելու վերայ են: Զինացիք սկսած են դուրս ելնել Թոնքինէ:

Ն Ե Ր Ք Ի Ն

Լոնտրայի Օսմանեան արտաստփոր պատուիրակ Հասան Ֆէհմի փաշա՝ Բ. Դրնէն ընդունած հրահանգաց համաձայն ճանքայ ելած է եւ մայրաքաղաքս կ'սպասուի այս երկուշաբթի օր:

— Պէլճիական նորընտիր դեսպան Պ. Պօրթկրավ չարթուս մէջ պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու և իւր Վեհապետին կողմէ յանձնուած պաշտօնազբըները մատոյց Նորին Կայսերական վեհափառութեան:

Անգլիական արտաստփոր դեսպան Սըր Ուիլիէմ Ուայթ եւս այսօր պատիւ կուենայ Վեհ. Սուլթանին ներկայանալու:

— Արտաքին գործոց նախարարի խորհրդականի նախորդ օգնական Չայեան Իխաս էֆէնտի՝ որ ծանօթ խնդրոյ մը պատճառաւ ասկէ առաջ հարցաքննութեան ենթարկուած էր Պետական խորհրդոյ առջեւ, անպարտ արձակուեցաւ:

— Ռուսական դեսպան Պ. Նէլիտով ազդու ձեռնարկներ ըրած լինելով Բ. Դրան մօտ, պատերազմական տուգանաց ներկայ տարեբաժնի հատուցման համար, Օսմանեան Կայսերական Պանքան հարկ եղած միջոցները ձեռք առած է, որպէս զի ըստ կարելոյն փութով դանձէ այդ հաշուոյն յատկացեալ հասոյթները, մանաւանդ ոչխարաց տասանորդը:

— Ծովաւմբի գործածութեան հմուտ չորս սպայք Զանադ-Գալէ, և ուրիշ քա-

նի մը սպայք ալ օսմանեան ուրիշ ծովեզերքներ պիտի ղրկուին:

— Մայրաքաղաքիս և արուարձանաց մէջ հեռաձայն գործիքի (թէլեֆօն) հաստատման մենաշնորհն ստանալու առաջարկ մը մատուցուած է Պետական Խորհրդոյն: Այս թեւերու գործածութեան համար յատուկ գրասենեակներ պիտի հաստատուին այլ և այլ կողմեր, ի դիւրութիւն հասարակութեան:

— Շուէտ Նորվեկիոյ Թագուհին իւր երկու որդւոց՝ Շարլ և Իօֆէն իշխանաց հետ երկու շաբաթի չափ Մեծ Կղզի անցունելէ յետոյ, մեկնեցաւ երէկ մայրաքաղաքս Սթոքհոլմ վերադառնալու համար: Կայսերական պալատէն և Բ. Դրնէն յատուկ պաշտօնեայք մինչեւ Վառնա կ'ընկերանան արքայական ընտանեաց, որք ճանքայ ելնելէ առաջ փութադին ջերմ շնորհակալութիւն արտայայտել առ Վեհ. Սուլթանն իրենց գտած սիրալիկ հիւրասիրութեան համար:

— Նեպոլէոն կ'իմանայ թէ իտալական կառավարութիւնը մտադիր է 25,000 զօրք ճանքայ հանել: Այս լուր անախորժ տպաւորութիւն յառաջ բերած է օսմանեան ազգայնաց մէջ:

— Պատերազմական վարժարանաց ընդհանուր վերատեսուէ Զէքի փաշա յանձնարարեց Թէրզեան Թովմաս էֆէնտիին որպէս զի ներկայ գտնուելով պատերազմական, զինուորական և բժշկական վարժարանաց տարեկան բոլոր հարցաքննութեանց, ընդհանուր տեղեկագիր մը պատրաստելով իրեն ներկայացնէ:

— Պաշտօնական ազդ մը կը ծանուցանէ թէ արգիլեալ է ի Թուրքիա ներմուծել ո՛ր և է նիւթ որ բժշկականութեան մէջ չգործածուիր եւ ուրիշ նիւթերու հետ բաղադրուելով պայթուցիկ նիւթ մը կրնայ լինիլ:

— Րէփիկ ընկերութեան տնօրէն Պ. Համիլթըն Լէնկ հրաժարական տուած է յայտնելով վարչական խորհուրդոյն թէ ներկայ տարւոյ վերջը պիտի թողու զիւր պաշտօն:

— Կ. Պոլսոյ առողջապահական վարչութիւնը Մատրիտէն մայիս 3 թուով հեռագրէ մը տեղեկանալով թէ Սպանիոյ մէջ կասկածելի հիւանդութեան քանի մը դէպքեր

պատահած են, յետս կոչեց Միջերկրականի օսմանեան ծովեղերեաց կայարաններուն տրուած հրահանգներն որք կը տրամադրէին իջեցունել Սպանիայէն եկող նաւուց քարանթիւնան : Հետեւաբար նախապէս որոշեալ քարանթիւնայի կանոնական տնօրէնութիւնք ի գործ կը դրուին գարձեալ :

— Կայսերական հրամանաւ որոշուած է ոստիկանաց յետեւալ ամսականաց վճարման յատկացնել մայրաքաղաքիս կալուածական տրոց յետեւալ մասն որ 600,000 ոսկւոյ կը հասնի :

— Օսմանեան Հանրային պարտուց վարչութեան տնօրէն կարգուեցաւ քաղաքապետութեան առաջին հաշուակալ Մէսուտ պէյ :

— Տպագրական Տեսչութիւնն հետեւեալ ազդէն ուղղեց մայրաքաղաքիս բոլոր լրագրաց :

«Տպագրական Օրէնքը քաղաքական լրագրաց կ'արգիլէ վիճաբանիլ կրօնային և եկեղեցական խնդրոց վրայ : Հետեւապէս, քաղաքական լրագրաց արտօնատէրներուն խօսիւ կը պատուիրուի՝ չզբաղիլ կրօնային խնդրովք, և ո՛ր և է հրատարակութիւն չընել թուրքիոյ մէջ բնակեալ ոչ-մահմէտական ժողովրդոց կրօնային հաւատալեաց և եկեղեցական գործոց վրայ, և ոչ-մահմէտական հասարակութեանց այն աշխարհային գործերուն վրայ որք ծագում կ'առնուն նոցա կրօնային և եկեղեցական կազմերէն ու կանոններէն : »

— Թուրք լրագիրք կը հերքեն վերջերս հրատարակուած այն լուրը թէ, եւրոպական Տէրութեանց կողմէ ծանուցագիր մը մատուցուեր է Բ. Դրան ի մասին Պերլինի դաշնագրոյն ինչ ինչ յօդուածոց :

— Նէպոլէոն կիմանայ թէ, թէև խաղաղութեան յոյսերն ապահովուած կերեւին, բայց Կայսերական կառավարութիւնը կը շարունակէ նախահոգ միջոցներ ձեռք առնուլ և այս պատճառաւ քանի մը

աւաքանի մը մեծ լծնդանօթներ ապսպրած են :

— Արեւելեան Ռումէլիի երեսփոխանական ժողովոյ որոշմամբ, կրթական վերատեսչութիւնը գաւառին նախակրթարանաց համար քննիչներ կարգելու ձեռնարկած է : Այսպէս, ամբողջ գաւառը գալոցական վեց շրջանակներու պիտի բաժնուի, և քննչաց թիւը պիտի լինի 26, որոց 13ը պուլղար, 7ը թուրք, 2ն յոյն, 1ն հայ, 1ը կաթոլիկ, 1ը բողոքական և 1ն հրեայ :

Այս կրթական քննիչք երեք դասակարգի բաժնուած են. առաջինք պիտի ստանան ամսական 10 ոսկի, երկրորդք 8 և երրորդք 6 ոսկի :

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան վերջնական արդիւնքն յայտնող հեռագիրք, որք երկուշաբթի առաւօտ մեծ հետաքրքրութեամբ կ'սպասուէին ամեն կարգի ազգայնոց կողմէ, ծանուցին թէ՝ Գերմանիայի Ս. Արքեպիսկոպոս Մուրատեան ընտրուած է ԿԱԹՈՂԻԿՈՍ եւ Ամեն Մակար Արքադան ՔԱՆՏԻՏԱՏ :

Աւասիկ կաթողիկոսական ընտրութեան պարագայից նկատմամբ Արեւելի յատուկ թղթակցին կողմէ հեռագրաւ հաղորդուած տեղեկութիւններն :

Ապրիլ 19/մայիս 1ի ուրբաթ օրը Պատգամաւորք Վեհարանէն հանդիսաւոր կերպիւ գնացին Իջման Տաճարն ուր Պատարագ մատուցուեցաւ մեծահանդէս արարողութեամբ : Յետ Պատարագին, Իջման Տեղւոյն մէջ, Պատգամաւորք օրինական երգումն ըրին : Յոգնախուռն բազմութիւն ժողովրդեան, Էջմիածնի շրջակայներէն եւ աւելի հեռաւոր գաւառներէ համախմբեալ հանդիսատես եղաւ բոլոր այս գործողութեանց :

Շարաթ առաւօտ գումարեցաւ ընտրողական ժողովն, որ ընդունելով Ազգային ժողովոյ եռանուն ցանկն, աւելցուց Մակար Սրբազանի անունն և քառանուն ցանկն հետեւեալ կերպիւ կազմուեցաւ :

Խրիմեան	Սրբազան
Մուրատեան	»
Աշըգեան	»
Մակար	»

Կիւրակէ օրը գումարուեցաւ ընտրողական ժողովոյ վերջնական նիստն : Իզմիրի առաջնորդ Գեր. Մուրատեան Սրբազան ընտրուեցաւ 30 ձայնիւ եւ Մակար Սրբազան՝ 16 ձայնիւ : Խրիմեան Սրբազան ստացաւ 13 ձայն միայն, իսկ Աշըգեան եպիսկոպոս 3 ձայն :

Մակար Սրբազանին քուէ տուած են միայն Սինոդին եւ Միաբանութեան անդամք. իսկ Մեքիսեդէի Սրբազան ընտրուեցաւ թէ՛ Սինոդին, թէ՛ Միաբանութեան և թէ՛ առաջնորդաց եւ աշխարհական պատգամաւորաց ձայնովը :

Սոյն ընտրութեան արդիւնքն՝ համազգական ժողովոյ նախագահ Մկրտիչ Արքեպիսկոպոսի կողմէ հեռագրուած լինելով յԱզգ. Պատրիարքարան, Ամեն. Ս. Պատրիարք Հայրն հեռագրաւ հաղորդեց զայն առ Գեր. Մուրատեան Սրբազան, հանդերձ շնորհաւորութեամբ :

Շնորհաւորական հեռագիրը ուղղուեցան նաեւ Կրօնական, Քաղաքական ժողովոյ եւ բազում ազգայնոց կողմէ :

— Կրօնական ժողովն գումարեցաւ այս երկուշաբթի օր, ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Գեր. Խորէն Նար-Պէյ Սրբազանի, եւ յետ քանի մը կարեւոր խնդրոց կարգադրութեան, զբաղեցաւ երկար ժամանակէ ի վեր անվաւեր մնացած 23 նիստերու ատենագրութեանց ընթերցմամբ եւ վաւերացմամբ, որք տեսցին 3 ժամ :

— Քաղաքական ժողովն եւս գումարեցաւ չորեքշաբթի օրն, ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ ատենապետութեամբ Վսեմ. Սիմօն պէյի եւ գլխաւորաբար խորհրդակցելով Ազգ. Կեդր. սնտուկի ելեւմտից մատակարարութեան

խնդրովն, հարկ եղած տնօրինութիւններն ըրաւ :

— Ամեն. Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը Պոլիս գալէ առաջ, երուսաղէմի վանքին վերայ դարձուցեր է 3000 ոսկւոյ արծէքով կալուած մը զոր յառաջագոյն կառուցանել տուած էր Յոսելէի մէջ :

— Ելմտական Յանձնաժողովէն կարգեալ մասնախումբն որ պաշտօն ունի Տաֆալայի տրոց վերաբաշխմամբ զբաղել, շարժուս գումարուելով, բոլոր վիճակաց վրայ բաշխումն որոշեց մէկ նստի մէջ : Այս կարգադրութեամբ Տաֆալայի տուրքն որ ասկէ առաջ անուանական կերպով 100,000 զրուշէր, 1151 ոսկւոյ իջուցուած է :

— Երէկ Բ Դռնէն՝ ըստ սովորութեան՝ Պատրիարքարանի գործակատար Ֆրէնկեան Աւրահամ էֆէնտիի յանձնուեցաւ Կայսերական այն Իրատէն, որ կը հրաւիրէ զնորընտիր Ս. Պատրիարքն յառաջիկայ երեքշաբթի օր Կայսերական պալատն երթալ, Վեհ. Սուլթանին ներկայանալու համար :

— Մշոյ առաջնորդական Տեղապահի ստորագրութեամբ հեռագիր մը հասաւ Երէկ ի Պատրիարքարան, որ կը ծանուցանէ թէ Ամեն. Խրիմեան Հայրիկ երեքշաբթի օրը մեկնեւ է անտի ի Կարին :

Ա Ձ Դ

Լաւ ձեռագործ գիտցող և այլևայլ ուսմանց հմուտ վարժուհի մը, որ ազգային վարժարանաց մէջ յոյժ գոհացուցիչ կերպիւ պաշտօններ վարած է, կը փափաքի ազգային վարժարանի մը կամ պատուաւոր տան մը մէջ վարժուհւոյ պաշտօն վարել :

Պէտք ունեցողք կրնան դիմել «Արեւելք» ի Խմբագրատունը :

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀՐԵԱՅ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Թարգմանիչ ԿԱՐԱՊԵՏ Ս. ԻԻԹԻՒՃԵԱՆ

Հրատարակիչը

Նշան Կ. Պերպերեան և Ս. Տեօֆիլեան

Սոյն գործին Բ. Հատորն եւս, որ կը պարունակէ 72 մեծ և փոքր պատկեր, ամբողջացած ըլլալով, սկսեալ է երբորդ Հատորի հրատարակութեան:

Առաջին և երկրորդ Հատորներու թղթական զինն է՝ իւրաքանչիւրին 50 զրշ:

Երրորդ Հատորի բաժանորդագրութեան զինն է 25 զրշ:

16 երեսէ բաղկացեալ մէն մի թերթ 50 բարա:

Գաւառաց Համար թղթատարութեան ծախքը միատեղ հաշուելով, մէն մի Հատորի զինն է 50 զրշ:

Գաւառներէ բաժանորդ գրուիլ վաւերաբողջ պարտին բաժնեգինը ԿԱՆԻԻԿ յղել, Օսմանեան թղթատարի նամակադրոյնով, «Բուրաստան Մանկանց» Հանդիսի խմբագրատունն, հետեւեալ հասցէիւ:

Նշան Կ. Պերպերեան

Կ. Պոլիս, Էսկի Ջապիթիէ ճատտէսի, թիւ 63

Գ. Մ. ԱՍԼԱՆԵԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ի ՊԵՏԱ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՓԱՐԱՆԱՅ

Ազգային առաջնակարգ վարժարանաց Համար անհրաժեշտ եղող սոյն օգտակար դասագիրքը կը գտնուի բոլոր դրավաճառաց քով: Կեդրոնատեղին է Հայոց Միացեալ Ընկերութեանց Դրասենակը, Կալաթա, Կէօջէ Օղլու խան, 12:

Գին 20 դահ. արծաթ:

Շատ գնողաց համար գոհացուցիչ զեղի կը լինի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Պ. ԼԵՔՈՔԻ ՄԵՐՈՒԹԻՒՆԸ

ՓՈՐԹԻՒՆԷ ՏԻՒ ՊՈՒԱԿՈՊԷ

Իւթիւճեան Կարապետ էֆէնտի թարգմանութեամբ Արեւելքի մէջ իբրեւ թերթի հրատարակեալ այս հետաքրքրաշարժ և միանգամայն հրահանգիչ վէպին ամբողջ չորս Հատորները կազմուած կը վաճառուին մայրաքաղաքիս ամեն հայ գրավաճառաց քով, և կամուրջին գլուխը ջրավաճառ Պօղոս և Յակոբ աղաներու խանութները: Զորս Հատորին գինն է 20 զրուշ:

Նոյն տեղերը կը վաճառուին նաեւ Կ. Ս. Իւթիւճեան էֆէնտի հետեւեալ թարգմանութիւնը:

ԹԱՓ. ՀՐԵԱՅ Բ. տղագրութիւն պատկերազարդ Ա. Հատոր.	գին զրշ 50
ՅԵՐԿԻՆ Ի ԼՈՒՍԻՆ	» » 7 1/2
ՄԱՐԳԵՂՈՒՆԻ	» » 7 1/2
ԸՆՏԱՆԵՂՈՒՐԿ 2 Հատոր	» » 15
ԿԱՐՄԻՐ ՄԱՐԴՈՅ ԵՐԴՈՒՄԸ	» » 12
2 Հատոր	» » 6

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՈՒՍՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ
Ի պէտս Հայահաս աշակերտաց, ընծայացուաց և եկեղեցասիրաց:

Երևալեաց

Տ. ԽՈՐԵՆ ՔԱՀԱՆԱՅ ՔԻԶԻՐԵԱՆ

(Գին կէս մէճիտ)

ՄԵՐ ԵՐԿՐԱՒՈՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ

ԵՒ ԻՒՐ ՅՕՐԻՆԷՉԸ


Թարգմանեց Արմենակ Տ. Յակոբեան

Սոյն գրքոյն որ անդիւրէնէ թարգմանուած է, իրեն նպատակ ունի մարմնոյն զանազան մասանց կազմութեան և փոխադարձ յարմարութեան վրայ յետևիլ՝ հաստատել Արարչի մը գոյութիւնը և Նորա իմաստութիւնն ու բարութիւնը: Մասնաւորապէս տղայոց համար պատրաստուած է պարզ և յիւրմբունեւի ոճով մը, բայց կը պարունակէ այնպիսի տեղեկութիւններ որք կրնան ամեն կարգի ընթերցողաց համար հետաքրքրական, կարեւոր և հրահանգիչ լինել:

ՍԵՅՏԵԼ ԵՒ ՆԱԻՄԱՆ

ՏՐԷՋՏԱ [ՍԱ.ՔՍՈՆԻԱ]

Եւրոպայի մէջ կա-
րի մեքենայ չիտող
ամենամեծ գործա-
րանն :




Գործարանատեւա-
ր «Օբեկէնալ Սափաւեա
րէճէա» կոչուած հըռ-
չակաւոր ձեռքի մե-
քենային :

ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ, ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ

Ընտանեաց համար
ձեռքով և ոտքով բա-
նող մեքենայք :

ՆԱԻՄԱՆ մեքենայն B

Մոտիվներու և
դերձակներու համար
մեքենայք :



Այս մեքենայն իւր թելին տակ
լայնկէկ տեղ մ'ունի , ինչպէս նաեւ
ամեն տեսակ կարերու համար նո-
րանոր գործիքներ , և շատ դիւ-
րութեամբ լաւ

ՕՂԱԿ

չինելու համար մասնաւոր գոր-
ծիք մը :

Այդ մեքենային համար աշ-
խարհիս ամեն կողմ արտօնու-
թիւն առնուած է :

Ծանօթ. — Այդ ԿԱՏԱՐՆԵԼՈՒԹԻՒՆԸ չտեսած՝ կարի մեքենայ մի՛ գնէք :

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆ



ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԶՐԻ ԿՈՒՍՈՒՑՈՒԻ

Ընտանեաց համար օղակի գործիք 75

Դերձակաց » » » 125

Թուրքիոյ և Պուրկարիոյ համար
գործակալ և մթերանոցապետ

ԷՄ. Ժ. ՄԷՐՃԱՆՕՅ

Կ. Պոլիս, Հաճօրուլու խան, թիւ 17

ԳՈՐԾԱՐԱՆԻ ՆՇԱՆՆ



Ամեն տեսակէն 1500 մեքենայ միշտ պատրաստ կը գտնուին :

Սրտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼ Ք ԼՐԱԳՐՈՅ